3370

28(075)
O-84
1872

2010

№ 2001

2620

ՆԱԽԱՇԱՒԻՂ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԸՍՏ

Ռուսական դաւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ ՅՈՎՍԷՓ Ա. Ք. ՕՐԲԵԼԻ

Ի,

ԳԼԽԱՒՈՐ

Հաւատալիք քրիստոնէական կրօնի

ՏՊԱԳՐԵԱԼ

Հրամանաւ Վեհափառ Հայրապետին մերոյ

Տեառն Գէորգայ Դ,

Ամենայն Հայոց Կաթողիկոսի

ԹԻՖԼԻՍ

ԻՏՊԱՐԱՆԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

(Ընդ տեսչութեամբ Հ. Էնֆիաճեանց)

1870

28(075)
О-84
ЦЕНТР. - ГОСУД. - ЕНТЕР.
8 ІЮНЬ 1898
1476
1005

Զայս նախաշաւիղ կրօնադիտութեան և զգլխաւոր հաւատալիս ուղղափառ դաւանութեան ընթերցեալ ըստ հրամանի Վեհափառ Հայրապետին մերոյ Տեառն Գէորգայ Դ., ամենայն Հայոց Կաթողիկոսի, ոչինչ դոլ ի սոսա հակառակ ողջամիտ վարդապետութեան Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ։

Ի ՏՓԽԻՍ 20 Յուլիսի
1 8 7 0

Գաբրիէլ Եպիսկոպոս
Այվազեան։

Дозволено Цензурою. Тифлисъ, 20-го Іюля 1870 года.

Մեծանուն Գրադարանի
Гос. библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մասիսյանի անվան

Նորին գերապատուութեան

2316

ՎԻՃԱԿԱՒՈՐ

Առաջնորդի Հայոց Վրաստանի և Իմերեթի

ՍՐԲԱԶԱՆ ՄԱԿԱՐԱՅ

ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՐԻՒԷՐ

Իմաստակ հոգւոյ հանդուցեալ Հայրապետի նորին Սուքիասի Արք Եպիսկոպոսի Կարնեցւոյ։

ՅԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԷ

Ազգ. Հայոց Բարեգործ. Ընկ.
Գրադարան
Թիֆլիս Հիմն. 1894 Նորոգ. 1909 Тифл.
основ. нов. пер.
Библиотека
Арм. Благотв. О-ва на Кавк.

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ՀԻՄՆ. 1894 ՆՈՐՈՒՆ. 1909 ԹՎԻՆ.
Основ. 1894 нов. пер. 1909 г.
БИБЛІОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кавк.

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բարեգ. ընկեր.
– 8 ІЮНЬ 1898
Центр.-Лит.-Чит.
Арм. Благотв. Общ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թէպէտ և չեն սակաւ 'ի մեջ ձեռնարկք քրիստոնէական հաւատոյ ուսմանց, այլ ոչ ամենեքին հաւասարապէս պիտանիք և յարմարաւոր 'ի դիւրացուցանելոյ զայոց զկարևոր հրահանգս կրօնագիտութեան:

Երկարատև փորձն յայսմ մասին, նաև տրտունջ և դժուակրութիւնք աշակերտաց՝ հարկ յիմ վերայ եդին աշխատասիրել զայս առձեռն մատենիկս, և ըստ իմումս փորձոյ, որքան կարելին էր խորշեցայ յայնոցիկ դժուարութեանց, զորս նշմարէի յայլս: Վասն զի ոմանք յայնց ձեռնարկաց կամ 'ի դասագրոց որ երևին 'ի մեջ կարի ընդարձակք են վասն պատանեկաց, և ոմանք կարի համառօտք, ոմանք խրթնախօսք վարժապետաց անգամ անիմանալիք ոնմաք բոլորովին զուրկք 'ի ճշդութենէ բառից և իմաստից, որ անպատճառ կարևորն է յուսմունս հաւատոյ, ոմանք խառնակալք աւելորդ, անտեղի և խառնափնդոր տեղեկութեամբք, միանգամայն անհամեմատ ներկայ զարգացմանս Հայ մանկտւոյն, և զուրկ 'ի կարևորացն այժմու ժամանակիս:

Այսոցիկ աղաղաւ պատշաճ վարկայ տպագրել զայս դոյզն երկասիրութիւն, յորում թէ ոչչափ յաջողեալ իցեմ 'ի դիտաւորութեանս՝ մտադիր սիրով թո-

ղում վկայութեան հմուտ և բարեխիղճ ուսուցչաց կը-
րօնագիտութեան:

Յայսմ երկասիրութեանս բազմօք հետևեցայ շաւ-
ղաց ընտրելագոյն ձեռնարկացն արդեաց, զորոց ընթացս
և զկարևորագոյն իմաստս 'ի սուրբ գրոց առեալս պարզ-
իմաց բանիւք 'ի սմին բովանդակելով, որպէս զի մի՝ թուլ-
ցիմ նորաձեւութիւն ինչ մուծանել 'ի սմին հակա-
ռակ այնց ձեռնարկութեանց, որք վաւերացեալք են 'ի
սրբոց Հայրապետաց մերոց:

Զայս միայն պարտ ինձ համարիմ ասել աստանօր,
զի գործ է վարժապետին յուսուցանելն մանկանց գնա-
խագիտելիս քրիստոնէական կրօնից,

Նախ՝ ընդարձակ և դիւրին բառիւք պարզաբանել
առաջի աշակերտաց զեւրաքանչիւր հարցս և զպատաս-
խանիս առաւել պատմական ոճով, զի մի՝ նոքին իսկ ա-
շակերտք թուլթակօրէն ուսանիցին զայսպիսի գիտու-
թիւնս, այլ ճիշդ հասկանալով զիմաստս և ուղիղ պա-
տասխանելով:

Երկրորդ՝ պահանջել 'ի նոցունց, զի ճշդիւ ըստ
բառիցն, և ոչ այլ և այլ բացատրութեամբք, արասցեն
պատասխանի հարցմանցն. զի ոչ է մարթ ներել ում և իցէ
նորահնար կամ անյարմար բառիւք մեկնել զճշմարտու-
թիւնս հաւատոյ, որպէս սովոր են ոմանք:

Երրորդ՝ պատուիրել մանկանց, զի զգլխաւոր իմաս-
տս պատասխանեացն սերտ 'ի բերան ուսանիցին, իսկ
զծանօթութիւնս, զտպագրեալս մանր տառիւք՝ ընթեռ-

նուցուն միայն մեծաւ ուշադրութեամբ և շատ անգամ:

Չորրորդ՝ կարևոր համարիմ աշակերտաց 'ի մտի
պահել ամենայն ճշդութեամբ և զվկայութիւնսն որ 'ի
սուրբ գրոց, զի այնոքիկ իսկ են հիմունք վարդապետու-
թեանց հաւատոյ, յորոց վերայ հիմնեալ հաստատին և
ամենայն շինուածք աստուածաբանական գիտութեանց և
ուսմանց, հարկաւորացն 'ի գիտութիւն ամենայն առն
քրիստոնէի և բարեպաշտի:

28532-4.2

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Այս.ՍՍՌ
Ա. Ա. Մասիսյան
Ա. ԱՍԱՏՈՒՍՈՒՆ ԱՆՎԱՆ

(11665-57)
11495-57

12012

ԳՐԱԴԱՐԱՆ ՔԻՉԼԻՍ ՀԻՄՆ.
основ. 1894 ՆՈՐՇՐՋ. нов. пер. 1909 ТИ
БИБЛИОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кавк.

ՆԱԽԱՇԱՒԻՂ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Քրիստոնէական հաւատոյ

Հ. Ի՞նչ է կրօնագիտութիւնը:

Պ. Կրօնագիտութիւնն է գործնական ուսումն, որ սովրեցնում է մարդոյ ճանաչել ճշմարիտ և Աստուածավայել կրօնը, որպէս զի նորանով ուղիղ վարելով՝ երջանիկ լինի այս և հանդերձեալ կեանքում:

Հ. Ի՞նչ է կրօնն:

Պ. Կրօնն է ճանաչել, սիրել և պաշտել Աստուած:

Հ. Այդ կրօնը 'ի բնէ կամ 'ի բնական կարգի ովքէ մարդոյ սովրեցնողը:

Պ. Առաջին՝ մարդոյ առողջ դատողութիւնը, երկրորդ՝ խղճմտանքը, երրորդ՝ բոլոր ազգայ միաձայն խոստովանութիւնը:

Ծանօթութիւն. Ա. Առողջ դատողութիւնը ուսուցանում է ամենայն արարածոց ճանաչել մի Արարիչ և երկնի և երկրի Տէր

և Իշխան, և ընդունել իւր և բոլոր արարածոց կախումը նորա արարչական և նախախնամող զօրութիւնից։ Բ. Խղճմտանքը ներսից իմաց է տալիս իւր կախումը մի ծայրագոյն զօրութիւնից այսինքն յԱստուծոյ։ Այս խղճմտանքը կամ հոգւոյ զգացողութիւնը կամ ազդեցութիւնը երբէք չէ դադարում և չէ ոչնչանում։ Գ. Աւելի պարզը. Բոլոր ազգաց միաձայն խոստովանութիւնը, որոնք ամէն ժամանակ խոստովանեցան իւրեանց կախումը մի ամենակարող Էակից—յԱստուծոյ։ Այսպիսի յարաբերութիւնը Աստուծոյ և մարդոյ մէջ, որ Աստուծոյ կողմից՝ ցոյց տուաւ մարդոյս իւր կատարելութիւնները, խորհուրդները, գործերը և իւր սուրբ կամքը, իսկ մարդոյս կողմից՝ խոստումն առաւ այն ամենին հաւանելը, ընդունելը և հնազանդելը նորա կամաց՝ ասուեցաւ կրօն, այսինքն կրելի, ունելի, պահելի, ՝ի՛ բաւիղ կազմած, իբր թէ իւր սրտի մէջ ունի և կրում է միշտ մի փափաք, ցանկութիւն Աստուած որոնելու, նորան մօտենալու, կապուելու և միաւորուելու նորա հետ։

Հ. Ո՞րպիսի ուսումն է կրօնը և ի՞նչ է սովրեցնում։

Պ. Կրօնը գործնական ուսումն է, որ մարդոյս սովրեցնում է միջոցները, որով նա կարող լինի մօտենալ Աստուծոյն և միանալ նորա հետ։

Հ. Բաւական՞ է մարդոյ միայն կրօն գիտենալը։

Պ. Ոչ, բաւական չէ։ "Ոչ ամենայն, որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է՝՝։ Մատթ. Է. 21։

Հ. Արդեօք հարկաւո՞ր է մարդոյ կրօնը թէ ոչ։

Պ. Անշուշտ, պատճառ որ՝ կայ Աստուած երկնի և երկրի Արարիչ և Տէր, և առանց Աստուծոյ մարդս կարող չէ երջանիկ լինել. վասն զի "Ճանաչելն զԱս-

տուած՝ բովանդակ արդարութիւն է, և գիտելն զզօրութիւն նորա՝ արմատ անմահութեան՝՝։ Իմաստ. Ժե. 3։ Եւ մարդս մի միայն Աստուծոյ մէջ կարող է գտնել իւր հոգւոյ ապահովութիւնը, մխիթարութիւնը, յոյսը և օգնութիւնը, ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն. "'Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ 'ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ՝՝։ Սաղմ. Հ։

Հ. Ի՞նչ է կրօնի առարկայն։

Պ. Կրօնի առարկայն Աստուած է, և Աստուծոյն վերաբերեալ ճշմարտութիւնքը։

Հ. Ո՞րն է առաջին ճշմարտութիւնը կրօնի մէջ։

Պ. Առաջին ճշմարտութիւնը կրօնի մէջ այս է՝ թէ կայ Աստուած ամենակարող, Հոգի յաւիտենական, երկնի և երկրի Արարիչ, և թէ պէտք է հաւատալ նորան. "Հաւատալ արժան է այնմ՝ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աստուած՝՝։ Նա որ մօտենում է Աստուծոյն, պէտք է հաւատայ թէ կայ Աստուած՝՝։ Եբր. Ժա. 6։

Հ. Ինչո՞վ կարող ենք հաստատել այդ ճշմարտութիւնը։

Պ. Առաջին՝ մեր մտքով. երկրորդ՝ խղճմտանքով. երրորդ՝ ցայտնութիւնով։

Ծանօթ. Ա. Մեր միտքն և դատողութիւնը վկայում են մեզ՝ թէ կայ ամենակարող Արարիչ, որ ստեղծեց այս աշխարհքս, պատճառ որ՝ ոչ մի բան չէր կարող ինքն իրան լինել, և ոչ ոք էլ չէր կարող ինքն իրան ստեղծել, և ոչ էլ ուրիշ հոգւոր արարածներից մինը կարող էր տալ ուրիշներին այն կատարելութիւնները, որոնք ինքն չունէր. ուստի մարդս քննելով աչք արձակս դեղեցիկ և կատարեալ

կարգը, որ յայտնի ապացոյց է Աստուծոյ ամենիմաստութեան, ամենակարողութեան և ամենաբարութեան, ինքըն իրան խոստովանում է, թէ կայ մի անսկիզբն և անվախճան Էակ, որ ստեղծեց աշխարհքս, ինչպէս այս մեր մտքի խոստովանութիւնը հաստատում է և սուրբ գիրքը. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա՝ պատմէ հաստատութիւն». Սաղմ. ԺԹ. 1։ «Աղէ՝ հարց ցչորքոտանիս՝ և ասիցեն քեզ, և թռչնոց երկնից՝ և ցուցցեն քեզ. ճառեա երկրի՝ և պատմեսցեն քեզ, ով է որ ոչ գիտաց այսու ամենայնիւ թէ ձեռն Ցեառն արար զայս ամենայն, և թէ ի ձեռին նորա է շունչ ամենայն կենդանեաց և հոգի ամենայն մարդոյ». Յովբ. ԺԲ. 78։

Բ. Խղճմտանքը մի այնպիսի ազդարար հոգւոյ զօրութիւն է, որ մարդոյս ներսից իմաց է տալիս բարին և չարը, ցոյց է տալիս իւր պարտաւորութիւնները, ահ է զձուում մարդոյ սրտի մէջ չար գործելու ժամանակ, և յոյս է տալիս բարի գործելու ժամանակ։

Այս ներքին ազդեցութիւնը, որ խղճմտանք կոչում, ոչ թէ սովորական բան է, այլ ի բնէ Աստուած ամէն մարդոյ հոգւոյ մէջ տպաւորած, որպէս Աստուծոյ ձայն և նորա գոյութեան ներքին վկայ, հաստատում է, թէ կայ մի դատաւոր և օրէնսդիր, որ պիտի օրէնքով դատի մարդոյս։ Խղճմտանքը հաստատում է՝ թէ պէտք է դատի Աստուած հեթանոսաց ևս, թէ և նոքա անծանօթ լինին Աստուածային յայտնութեանը, վասն զի ունին օրէնք գրած իւրեանց սրտի մէջ իւրեանց մտքի վկայութեամբ. «Հեթանոսք, որք զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեն, նոքա՝ որք զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք, որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց՝ և յանդիմանել զմիմեանս. ի խորհրդոց իւրեանց, կամ պատասխանի տալ յաւուրն յո-

թում դատիցի Աստուած զդաղտնիս մարդկան». Հռովմ. Բ. 14—15։

Գ. Յայտնութիւնը ցոյց է տալիս մարդոյ Աստուծոյ գոյութիւնը, աքանչելի գործքերը, նորա կատարելութիւնները և խորհուրդները, որոց մարդոյ միտքը կարող չէր հասնել, եթէ Աստուածային յայտնութիւնը չսովրեցնէր, և այդ սուրբ գիրքը ոչ թէ մարդկային ուսմամբ գրուեցաւ, այլ աստուածային ազդեցութեամբ և Հոգւոյն սրբոյ շնչմամբ. որով ցոյց տուաւ մեզ Աստուած իւր յաւիտենականութիւնը, ամենակարողութիւնը և Աստուածութիւնը, որ աւելի պարզ իմաց տայ մեզ իւր կատարելութիւնը և սէրը։

Հ. Ո՞ր տեղն են պարունակուում Աստուածային յայտնութիւնքը։

Պ. Աստուածաշունչ գրոց, այսինքն հին և նոր կտակարանի մէջ։

Հ. Ո՞րն է Աստուածաշունչ գիրքը։

Պ. Այն սուրբ մատեանը, որոյ մէջ հաւաքած կան երկնային ճշմարտութիւնքը և Աստուծոյ պատգամքը՝ աստուածային ազդեցութեամբ և Հոգւոյն սրբոյ շնչմամբ յայտնած, մարգարէից և առաքելոց ձեռքով զանազան ժամանակ գրած, որոց գումարը միասին հաւաքած՝ Աստուածաշունչ գիրք, կամ սուրբ գիրք կոչուեցաւ։

Հ. Ի՞նչ պատճառաւ այդ սուրբ գիրքը Աստուածաշունչ կոչուեցաւ։

Պ. Այն պատճառաւ որ՝ Աստուածային ազդեցութեամբ և Հոգւոյն սրբոյ շնչմամբ գրուեցաւ. «Ոչ եթէ ըստ կամաց մարդկան ստուաւ մարգարէութիւն երբեք, այլ 'ի Հոգ-

ւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ»։ Բ. Պետ. Ա. 21։

Հ. Աստուածաշունչ գիրքը ինչ պատճառաւ էպոէիրան եւս կոչուեցաւ։

Պ. Որովհետեւ էպոէ բառը նշանակումէ դաշն, աւանդ եւ ուխտ, ուստի Աստուածաշունչ գիրքը, որոյ մէջ պարունակումէ Աստուծոյ դաշինքը, խոստմունքը եւ պատգամքը, կոչուեցաւ Կտակարան։

Հ. Ո՞յք գրեցին հին եւ նոր կտակարանը։

Պ. Հինը գրեցին մարգարէք, իսկ նորը՝ առաքեալք։

Հ. Հին եւ նոր կտակարանը քանի՞ գիրք են բովանդակում իւրանց մէջ։

Պ. Հինը բովանդակումէ քառասուն եւ եօթը գիրք. իսկ նորը՝ քսան եւ եօթը։

Ծանօթ. Հին կտակարանը բաժանումէ չորս կարգ, Ա. Օրէնաբերէն, որ պարունակումէ իւր մէջ հին օրէնքները, Աստուծոյ խոստմունքները եւ ուխտը։ Բ. Պատմաբանական, որ պատմումէ առաջին մարդոյ բարեպաշտութիւնը։ Գ. Բարոյական, որ պարունակում է բարոյականութեան ուսմունքը եւ մարդկային կենաց կանոններ եւ խրատներ։ Դ. Մարգարէական, որ պարունակումէ մարգարէութիւնք եւ ապագայից գուշակութիւնքը Յիսուսի Քրիստոսի անօրէնութեան համար։

Ծանօթ. Օրէնաբերէն են՝ Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց եւ Երկրորդ օրինաց գիրքերը՝ Մովսէսից գրած։ Պատմականներ՝ Յեսուայ որդւոյ Նաւեայ, Դատաւորաց, Հռութայ, Թագաւորաց, Մնացորդաց, Եզրասայ, Նեեմիայ, և Եսթերայ։

Բարոյականներ՝ Յովբայ, Դաւթի և Սողոմոնի գիրքերը։

Մարգարէական՝ Եսայեայ, Երեմիայի, Եզեկիէլի, Դանիէլի և միւս երկոտասան փոքր մարգարէից։

Նոր օրինաց գիրքերն նմանապէս բաժանւումեն օրէնաբերական պատմական, բարոյական, և մարգարէական։

Օրէնաբերական՝ չորս աւետարանչաց Գիրքերը, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու, որ մէկ բառով կասին Աւետարան, այսինքն բարութեան և փրկութեան աւետիս պարունակող։ Պատմական՝ գործք առաքելոց, որ պատմումէ Հոգւոյն սրբոյ գալուստը, և Քրիստոսի եկեղեցւոյ տարածումը առաքելոց ձեռքով, Բարոյական՝ Կաթուղիկեայց եօթը թղթերը, մինը՝ Յակոբայ առաքելոյ, երկուսը՝ Պետրոսի, երեքը՝ Յովհաննու աւետարանչի թղթերը, մինը Յուդայի առաքելոյ։ Պողոս առաքելոյ տասնչորս թղթերը, այսինքն Հռովմայեցւոց, Կորնթացւոց երկուսը, Եփեսացւոց, Թեսաղոնիկեցւոց երկուսը, Կողոսացւոց և Գաղատացւոց, առ Տիտոս, առ Փիլիմոն, և երկուսը՝ առ Տիմոթէոս, առ Եբրայեցիս և առ Փիլիպեցիս։ Մարգարէական կոչւումէ Յովհաննու Յայտնութիւնը, որ նկարագրումէ եկեղեցւոյ ապագայ վիճակը։

Հ. Ո՞ր ուսումն է ամենից աւելի հարկաւոր մարդոյ։

Պ. Ուսումն քրիստոնէական կրօնի և ուղիղ հաւատոյ, զի իբրև մարդ և քրիստոնեայ՝ պարտիմք պարզ ճանաչել զԱստուած, հաւատալ և պաշտել նորան, և անսխալ դաւանել այն եկեղեցւոյ խորհուրդները որոյ մէջ ծնել և դաստիարակւում եմք։

Հ. Ի՞նչ պատճառաւ պարտիմք ճանաչել Աստուած։

Պ. Այն պատճառաւ որ՝ ինչպէս մեր ժամանակաւոր երջանկութիւնը, նմանապէս և մեր հոգւոյ փրկութիւնը կախուած է յԱստուծոյ, և առանց Աստուծոյ՝ մարդ կարող չէ երջանիկ լինել ոչ այս և ոչ հան-

դերձեալ կենաց մէջ. «Այս են յաւիտենական կեանք զի ծանիցեն զքեզ՝ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս». Յովհ. ԺԷ, 3: «Ամենայն որ հաւատայ 'ի նա, մի՛ կորիցէ, այլ ունիցի զկեանսն յաւիտենականս». Անդ. Գ, 16:

Հ. Ո՞ր եկեղեցւոյ մէջ ես ծնեալ:

Պ. Ես ծնեալ եմ Հայոց առաքելական եկեղեցւոյ մէջ, որ Թադէոս և Բարթուղիմէոս առաքելոց ձեռքով հիմնուեցաւ Հայաստանումը:

Հ. Հաւատով ի՞նչ ես կոչւում դու:

Պ. Հաւատով կոչւում եմ Քրիստոնէայ, այսինքն Քրիստոսեան, Քրիստոսի աշակերտ, հետևող և դաւանող Քրիստոսի:

Հ. Քրիստոնէական հաւատոյ հիմն և ուսուցիչը ո՞վ է:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս. «Հիմն (քրիստոնէական հաւատոյ) այլ ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս». Ա. Կորնթ. Գ, 11: «Մի՛ զոք կոչէք վարդապետ, զի ուսուցիչ ձեր Քրիստոսն է». Մատթ. Ը. 10:

Հ. Տէրն մեր Քրիստոս ե՞րբ և ի՞նչպէս սովորեցրեց իւր վարդապետութիւնը:

Պ. Երբ այս աշխարհքիս վերայ էր. «Շրջէր Յիսուս յամենայն կողմն գալիլիացւոց և ուսուցանէր 'ի ժողովուրդս, և քարոզէր զաւետարանն արքայութեան». Մատթ. Դ. 23: Եւ ապա իւր յարութիւնից յետոյ՝ հրամայեց աշակերտաց. «Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յա-

նուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ». Մատթ. ԻԸ. 19—20:

Հ. Առաքեալք ի՞նչպէս տարածեցին:

Պ. Երբեմն գրով և երբեմն խօսքով. «Հաստատուն կացէք և պինդ կալարուք զաւանդութիւնն (վարդապետութիւնները) զորս ուսայք եթէ գրով և եթէ բանիւ մերով». Թես. Բ, 14:

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ քրիստոնէական վարդապետութիւնը:

Պ. Աստուած ճանաչել, հաւատալ, յուսալ, սիրել և ամենայն զօրութեամբ պաշտել նորան. «Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման, այժմ խելամուտ եմ փոքր 'ի շատէ, այլ յայնժամ գիտացից որպէս և նայն ծանեալ զիս: Բայց արդ մնան հաւատք, յոյս և սէր. սոքա երեքեան և մեծ քան զսոսա սէրն է». Ա. Կորնթ. ԺԳ. 12, 13:

Հաւատ.

Հ. Ի՞նչ է հաւատը:

Պ. Հաւատն է պարզ ճանաչել, հաւանել և ընդունել այն ամէն ճշմարտութիւնքը, որ յայտնել է մեզ Աստուած:

Հ. Ճշմարիտ հաւատը ո՞րպիսի նշաններ կամ յատկութիւնք պիտի ունենայ:

Պ. Հաւատը պէտք է լինի հաստատուն, գործունեայ կամ կենդանի:

Հաստատուն՝ որ յաղթէ աշխարհքիս ամէն փորձութեանց. «Արմատացեալք և շինեալք 'ի նա և հաստատեալք 'ի հաւատս, որպէս ուսարուքն, առաւելեալք 'ի նմին գոհութեամբ». Պօղոս. Բ, 7:

Գործոնէայ կամ ճէնդանի՝ որ ունենայ այն ամէն գործքերը որոնք հաւատքը պահանջումէ մարդուց. «Եթէ ասիցէ ոք հաւատս ունել, և գործս ոչ ունիցի, միթէ հաւատք կարէ՞ն ապրեցուցանել զնա. հաւատք առանց գործոց մեռեալ են առանձինն». Յակ. Բ, 14, 29:

Ծանօթ. Որովհետև ամէն առաքինութեան հիմը և աղբիւրը հաւատն է, ուստի Քրիստոս Տէրն մեր ամէն բանից առաջ հաւատ էր պահանջում, այն պատճառաւ որ՝ մարդս հաւատով կը ընդունի յԱստուծոյ շնորհք և ողորմութիւն, և կը մօտենայ Աստուծոյն. հաւատով արդարութիւն և խաղաղութիւն կը ունենանք Աստուծոյ մօտ. «Այսուհետև արդարացեալք ի հաւատոյ անտի՝ խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». Հռովմ. Ե. 1: Հաւատով Աստուծոյ որդիք կը լինինք. «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Քրիստոս Յիսուս». Գաղ. Գ, 26: Հաւատով կարժանանանք յաւիտենական կենաց. «Զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս». Յովհ. Գ, 16: Հաւատով կը զօրանանք և կը յաղթենք աշխարհքին. «Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի: Եւ այս է յաղթութիւնն մեր, որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր». Ա. Յովհ. Ե, 4: Միով բանիւ, հաւատով կը բնակի մեր մէջ Յիսուս Քրիստոս, և կը միաւորէ մեզ Աստուծոյ հետ». Բնակիլ Քրիստոսի հաւատովք ի սիրտս ձեր, սիրով արմատացեալք և հաստատեալք». Եփես. Գ 17:

Հ. Հաւատոյ գլխաւոր մասունքները ի՞նչ տեղ են պարունակումէ համառօտիւ:

Պ. Հանգանակի, այսինքն Հաւատամքի մէջ:

Հ. Ի՞նչ է Հանգանակը:

Պ. Հանգանակն է հաւատոյ գլխաւոր մասանց պարզ, ուղղղ և համառօտ բովանդակութիւնը, ինչ որ մանրամասն գրուած են Աստուածաշունչ գրոց մէջ:

Հ. Ե՞րբ և ո՞ւր գրուեցաւ Հանգանակը:

Պ. Նիկիա քաղաքումէ, ուր 325 թուին ժողովեցան երեք հարիւր տասնեւութ հայրապետք, և հերքելով Արիոսի մոլորութիւնը՝ հաստատեցին քրիստոնէական հաւատոյ ուղղափառութիւնը:

Հ. Ասա ի լուր իմ հաւատոյ հանգանակը:

Պ. Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամենակալ՝ յԱրարիչն երկնի և երկրի, երևելեաց և անտեսանելեաց: Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ Միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և անտեսանելիք: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կաստարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւոյն սրբով: Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք: Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, երկնալ

յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախճան։ Հաւատամք և 'ի սուրբ Հոգին, յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն՝ և բնակեցաւ 'ի սուրբսն։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական Եկեղեցի. 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ 'Ի յարութիւն մեռելոց, 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենական։

Հ. Քանի՞ հաւատալի մասունք կան այս Հանգանակի մէջ։

Պ. Տասն. Գոյութիւն և միութիւն Աստուծոյ. Կատարելութիւնք աստուածայինք. Երրորդութիւն Աստուածային անձանց. Արարչագործութիւն Աստուծոյ և Նախախնամութիւն. Մարդեղութիւն Աստուածորդւոյն. Միւսանգամ գալուստ նորա. Իջումն Հոգւոյն սրբոյ 'ի յորդանան. Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդք նորա. Յարութիւն մեռելոց և վերջին դատաստան։

Ա.

Աստուծոյ գոյութիւնը եւ միութիւնը.

Հ. Գոյութիւն Աստուծոյ ասելով՝ ի՞նչ ես իմանում։

Պ. Գոյութիւն Աստուծոյ ասելով՝ իմանումեմ թէ կայ Աստուած, Հոգի յաւիտենական, ամենակարող, Արարիչ երկնի և երկրի և խնամարկող ամէն արարածոց. "Աստուած որ արար զաշխարհս և զամենայն որ 'ի նոսա, նա երկնից և երկրի է տէր". Գործ. ԺԷ, 24։ "Գոյ Աստուած յերկինս". Բ. Մակ. ԺԵ. 3։

Հ. Ի՞նչով կարող ենք հաստատել թէ կայ Աստուած։

Պ. Առաջին՝ մեր մտքի դատողութեամբ, և խրդմտանքի վկայութեամբ. "Արար 'ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել 'ի վերայ ամենայն երկրի. հաստատեաց կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան նոցա, խնդրել զԱստուած, զի թերևս զննիցեն զնա՝ և գտանիցեն. նա և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ". Գործ. ԺԸ, 26—27։ Եւ երկրորդ՝ Աստուածային յայտնութեամբ, որ մեր մտքի խոստովանութիւնը Աստուծոյ գոյութեան համար՝ հաստատումէ Դաւթի մագարէի բերանով. "Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա՝ պատմէ հաստատութիւն". Սաղ. ԺԸ, 1։ Գիտութիւնն Աստուծոյ յայտնի է 'ի նոսա, քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա. զի աներեւոյթք

նորա 'ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է մշանջենաւորութիւն և զօրութիւն և մեծութիւն և Աստուածութիւն նորա». Հռովմ. Ա, 19-20:

Ծանօթ. Ա. Երբ մտքով քննումէ մարդ իւր ծագումը, տեսնումէ որ ինքն զինքն չէր կարող ստեղծել, նմանապէս և ոչ ուրիշ արարած կարողէր «ստեղծել», որովհետև նորանք աւելի անկատար են քան զմարդը, ուստի հետևացնումէ՝ թէ կայ մէկ այնպիսի ամենակատար և ամենակարող Հոգի, որ ստեղծեց աշխարհքս, ուրեմն կայ Աստուած:

Բ. Մարդ մտաց դատողութեամբ քննելով աշխարհքս, տեսնումէ երկնքի և երկրի արարածները չատ գեղեցիկ կարգի մէջ դրուած, իսկոյն ինքն իրան հետևացնումէ, թէ ինքը կարող չէր այսպէս գեղեցիկ կարգի մէջ դնել, և ոչ էլ իրանք իրանց կարողէին լինել. ուրեմն կայ մի ամենազօր ստեղծող, որ այս ամէնը այսպէս գեղեցիկ կարգել ու կառավարումէ, և այս ամենազօր ստեղծողը Աստուած է:

Գ. Խղճմտանքը, որ ամէն մարդոյ սրտի մէջ յԱստուծոյ դրած իրրև բնական ազդեցութիւն, ներսից իմաց է անում բարին և չարը. և երբ բարի է գործում մարդս մըխիթարումէ, և երբ չար է գործում՝ տանջումէ: Այս խղճմտանքը իրրև Աստուծոյ ձայն և նորա գոյութեան վկայ՝ հաստատումէ, թէ կայ մի անտեսանելի գոյութիւն, այսինքն Աստուած; ուրեմն կայ Աստուած:

Դ. Ամէն ազգաց համաձայն խոստովանութիւնը ամէն ժամանակ և ամէն տեղ յայտնի ապացոյց է Աստուծոյ գոյութեանը. մինչև անգամ հեթանոսք, թէպէտ իրանց մտքի կուրութեամբ չկարացին ճշմարիտ Աստուածը ճանաչել, բայց լաւ համարեցան ճշմարիտ Աստուծոյ տեղ երկնքի և երկրի արարածները պաշտել, քան թէ ուրանալ Աստուծոյ գոյութիւնը, ապա ուրեմն կայ Աստուած:

Բ.

Աստուծոյ էութիւնը եւ նորա կատարելութիւնքը.

Հ. Ի՞նչ է Աստուած:

Պ. Աստուծոյ ինչ լինելը անիմանալի և անհասանելի է մարդոյ մտքին, թէպէտ հաւատում ենք թէ կայ Աստուած, բայց թէ ինչ է, չգիտենք պատճառ որ՝ մեր միտքը չէ հասնում նորան. «Ահա՛ հզօրն (Աստուած) մեծ է, և ոչ իմացուք (չգիտենք). թիւ ամաց նորա անսպառ». Յովբ. Լզ, 26:

Հ. Աստուծոյ ինչութեան և նորա կատարելութեանց համար ի՞նչ է սովրեցնում մեզ սուրբ գիրքը:

Պ. Ինքն Քրիստոս Տէրն մեր ասաց. «Հոգի է Աստուած». Յովհ. Դ, 24: Նա ինքն է յուխտեալն. «Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան». Սաղ. ճԱ 27: «Ըստ հրամանի մշանջենաւորին Աստուծոյ». Հռովմ. ԺԴ, 25:

Անմահ. «Երանելին և միայն հզօր, թագաւոր թագաւորաց և Տէր Տէրանց, որ միայն ունի զանմահութիւն». Ա Տիմ. Զ, 16:

Ամենակատար. «Հայեցաւ Յիսուս 'ի նա և ասէ՝ առ 'ի մարդկանէ այդ անկար է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր». Մատթ. ԺԹ, 25: «Զի ոչ տըկարացի առ յԱստուծոյ ամենայն բան». Ղուկ. Ա 37:

Անփոփոխ. «Ես Տէր Աստուած ձեր, և ոչ փոխիմ».

Մաղ. Գ, 6: "Ամենեքին որպէս զձորձս մաշեսցին և որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին, բայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն". Սաղ. ՃԱ, 28:

Ամենագէտ և ամենիմաստ. "Աստուած մեծ է քան զսիրտս մեր, և զիտէ զամենայն". Ա. Յովհ. Գ. 20: Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեան Աստուծոյ. որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց գննելոյ են ճանապարհք նորա". Հռովմ. ԺԱ 33:

Ամենուրեք. "Յո՞ երթայց ես 'ի Հոգւոյ քումմէ և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց. եթէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ 'ի դժոխս՝ դու անդ մնա ես". Սաղ. ՃԼԸ, 78:

Բարի. "Չիք ոք բարի, բայց մի Աստուած". Մատթ. ԺԹ, 17: Որոյ բարութիւնը նորա անչափ սիրոյ մէջ երևեցաւ. "Եւ զի յայսմ երևեցաւ 'ի մեզ սէրն Աստուծոյ, զի զորդին իւր միածին առաքեաց . . ". Ա. Յովհ. Դ, 9:

Արդարադատ. "Արդար է տէր և զարդարութիւն սիրէ, և զարդարութիւն տեսանեն երեսք նորա". Սաղ. Ժ. 7: "Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց. զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ". Հռովմ. Բ, 6, 11:

Սուրբ. "Այլ ըստ սրբոյն որ կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք". Ա. Պետ. Ա. 15:

Ճշմարիտ և Հաւատարիմ. "Զի նոքին (հաւատքն ձեր) պատմեն վասն մեր, . . . թէ որպէս դարձայք 'ի կռոց անտի ծառայել Աստուծոյ կենդանւոյ և ճշմարտի". Ա. Թեսաղ. Ա, 9. "Հաւատարիմ եղև յաշխարհի և վերացաւ փառօք". Ա, Տիմ. Գ, 16:

Հ. Ի՞նչէ Աստուծոյ անունը:

Պ. Աստուած չունի բնութեան անուն. "Ո՞վ էլ յերկինս և էջ՝ ո՞վ կալաւ զամենայն ծագս երկրի. (ո՞ գիտէ) զի՞նչ անուն է նորա". Առակ. Լ, 4: Այլ որովհետև անհնարին էր իմանալ նորա ինչութիւնը, ուստի ամէն ազգ մի միայն նորա այլ և այլ գործոց և կատարելութեանց նայելով՝ տուին նորան զանազան անուններ. զորօրինակ տէր Աստուած "Ես տէր Աստուած. այս է անուն իմ". Եսայ. Խբ, 8: Տէր ամենակալ անուն է նորա". Երեմ. ԾԱ, 57:

Հ. Մթթէ ոչ ոքին յայտնի չեղաւ Աստուծոյ անունը:

Պ. Աստուած ինքն թէպէտ Մովսէս մարգարէին ասաց. "Ես եմ Աստուած ոչ է՞" այսինքն ես եմ ինքնագոյ, անսկիզբն և անվախճան: Բայց այս էս բնութեան անուն չէր, այլ յատկութեան: —

Հ. Ապա ինչի՞ համար սուրբ գրքի մէջ կոչւում է Հոգի, Լոյս, Սէր, Հոր:

Պ. Այդ ամէնը նմանութեամբ միայն ասացին. պատճառ որ՝ նա աննիւթ և ամենապարզ լինելուն համար՝ կոչեցաւ Հոգի. "Հոգի է Աստուած, և երկրպագուացս նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել". Յով. Դ, 24: Անտուտ ճշմարտութեան

ՀՍՍՌ-Ամ.ՍՍՌ
Ա. Մեսրոպ Մաշտոցի անվան

համար՝ կոչեցաւ Լոյս. Զի Աստուած լոյս է, և խաւար 'ի նմա չիք և ոչ մի». Ա. Յով. Ա, 5: Մեզ սիրելուն համար՝ անուանեցաւ Սէր. «Եւ որ ոչն սիրէ, ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է». անդ. Դ, 8: Անաչառ արդարութեան համար՝ ասուեցաւ Հուր. «Քանզի Աստուած մեր հուր ծախիչ է». Եբր. ԺԲ, 29:

Հ. Եթէ Աստուած Հոգի է, տպա ինչի՞ համար Աստուծոյն ընծայում են ականջ, ձեռք, աչք, ձայն, ոտ:

Պ. Այդ ամէնը փոխաբերութեամբ ցոյց են տալիս Աստուծոյ կատարելութիւնքը և ներգործութիւնք մարդկանց վերայ. Տիրոջ ականջ ասելով՝ իմանում ենք նորա Լսողութիւնը. «Եղեցին ականջք քո 'ի լսել ձայնի աղօթից իմոց». Սաղ. ՃԻԹ, 2: Աչք ասելով՝ իմանում ենք նորա Ամենատեսութիւնը. «Աչք Տեառն 'ի վերայ արդարոց». ԼԳ, 16: Ձեռք ասելով՝ նորա Նախախնամութիւնը. «Ձեռք քո արարին և ստեղծին զիս». ԺԸ, 73: Ոտք ասելով՝ նորա արագահաս Օգնութիւնը:

Հ. Ո՞ւր է Աստուած:

Պ. Աստուած չունի բնակութեան տեղի, պատճառ որ անբովանդակելի էութիւն է, ուստի նա գոյութեամբ և զօրութեամբ ամէն տեղ է. «Ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա: Աչքայութիւն նորա ամենեցուն տիրէ». Սաղ. ՃԲ, 19—22: Եւ շնորհօք բնակւում է սրբոց մէջ. «Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և ոչք զողան 'ի բանից իմոց». Եսայ. ԿԶ, 21:

Հ. Արդեօք տեսնո՞ղ է մեկը Աստուած:

Պ. Ոչ. «զԱստուած ոչ ոք ետես 'ի մարդկանէ, բայց Միածին Որդին, որ է 'ի ծոց Հօր». Ա. Տիմ. Զ, 16: Վասն զի չունի նա նիւթական մասը, այլ աննիւթ և պարզ Հոգի է. «Հոգի է Աստուած». Յովհ. Դ, 24:

Հ. Կա՞յ էլ ուրիշ ճշմարիտ Աստուած:

Պ. Ոչ. Մի միայն է ճշմարիտ Աստուածը, երևելի և աներևոյթ արարածոց Արարիչը. «Տէր Աստուած մեր Տէր մի է». Բ. Օրին. Զ, 4: Ես եմ Աստուած, և չիք ոք բաց յինէն». Եսայ. ԽԳ, 11: «Չիք ոք Աստուած բաց 'ի միոյն. զի թէպէտ և իցեն անուանեալ Աստուածք, այլ մեզ մի է Աստուած Հայր՝ յորմէ ամենայն, և մեք 'ի նա, և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, և մեք նովաւ». Ա Կորն. Ը, 4, 5—6:—

Գ.

Երրորդութիւն Աստուածային անձանց.

Հ. Ինչո՞վ կարող ենք հաստատել թէ Աստուածութեան մէջ երեք անձինք կան,

Պ. Սուրբ գրոց վկայութեամբ. «Ողորմութեամբ Տեառն (Հայր) լի եղև երկիր, և բանիւ Տեառն (Որդի) երկինք հաստատեցան, և Հոգւով (Հոգի սուրբ) բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա». Սաղ. ԼԲ, 6: «Գնացէք այսու հետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ

և Հոգւոյն սրբոյ»։ Մատթ. ԻԸ, 19։

Հ. Ե՞րբ աւելի պարզ յայտնի եղաւ Երրորդութեան խորհուրդը։

Պ. Երբ Յիսուս Քրիստոս մկրտւում էր Յորդանան գետի մէջ, երկնքից Հայրական ձայնը վկայում էր նորա վերայ, և երկնքից Հայրական ձայնը վկայում էր՝ թէ «Դա է իմ սիրելի որդին»։ Մատթ. Գ, 16։

Հ. Երեք անձինք սուրբ Երրորդութեան ինչո՞վ են զանազանւում միմեանցից։

Պ. Անձնաւորութեամբ և անուամբ, պատճառ որ՝ առաջին անձն կոչւում է Հայր Աստուած, երկրորդը՝ Որդի Աստուծոյ, և երրորդը՝ Հոգի սուրբ։ իսկ բնութեամբ, զօրութեամբ և Աստուածութեամբ չեն զանազանւում. վասնզի ինչ կատարելութիւնք կամ յատկութիւնք Հայր Աստուած ունի, նոյնը ունին Որդին և Հոգին սուրբը, և անբաժանելի են Աստուածութեամբ. «Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս և ետ Որդւոյ ունել կեանս յանձին իւրում»։ Յովհ. Ե, 26։

Հ. Ամէն մէկ անձն ինչ յատկութիւն ունի։

Պ. Ամէն մէկ անձին յատկութիւնը իմացւում է իւր անունից. պատճառ որ՝ Հայրը չէ ծնած, այլ ինքն ծնող է Որդւոյ և բղխող Հոգւոյն սրբոյ. Որդին ծնող չէ, այլ ծնունդ անմարմին. վասն զի նա յառաջ քան զյաւիտեանս ծնաւ Հօր Էութիւնից որպէս լոյս 'ի լուսոյ «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած»։ Յովհ. Ա, 1։ Հոգին սուրբ ոչ ծնող է և ոչ բղխող. այլ եղող 'ի Հօրէ. «Հոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ»։ Յովհ. ԺԵ, 26։

Դ.

Արարչագործութիւն եւ Նախախնամութիւն Աստուծոյ.

Հ. Արարիչն երկնի և երկրի ասելով՝ Հաւատամքի մէջ, ի՞նչ ես հասկանում։

Պ. Հասկանում եմ թէ Աստուած իւր ամենակարող զօրութեամբ ոչնչից ստեղծեց երկինքը և երկիրը, և բոլոր արարածները, թէ երևելիք և թէ աներևոյթք. «Եւ զու Տէր՝ 'ի սկզբանէ զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են»։ Եբր. Ա, 10։

Հ. Ո՞յք են երևելի արարածք։

Պ. Երևելի արարածք են՝ որոց տեսնում ենք աչքով. զարօրինակ արեգակը, լուսին, աստղեր, հող, մարդիկ, անասուններ և այլն։ «Նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որք երեւին և որք ոչն երևին»։ Կող. Ա, 16։

Հ. Ո՞յք են աներևոյթք։

Պ. Աներևոյթ արարածք են՝ որոց աչքով չենք տեսնում, զարօրինակ հրեշտակ, մարդոյ հոգին։

Հ. Ի՞նչ է Նախախնամութիւնը։

Պ Նախախնամութիւն ասելով իմանում եմ, թէ Աս-

տուած, որ ստեղծեց երկինքը և երկիրը և նոցա միջի արարածները, նա ինքն է պահպանում և կառավարում ամենին. «Զամենայն հոգս ձեր ընկեցէք 'ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր». Պետր. Ե, 6—7: «Նա տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ: Զի նովաւ կեամք, և շարժիմք և եմք». Գործ. ԺԷ, 25—28:

Ե.

Մարդեղութիւն Աստուածորդւոյն.

Հ. Մարդեղութիւն ասելով ի՞նչ ես հասկանում:

Պ. Մարդեղութիւն կամ Մարմնառութիւն Աստուածորդւոյն ասելով՝ իմանում եմ՝ թէ Բանն Աստուած միածին Որդին, մարդկային բնութիւն առաւ Մարիամ կուսի արգանդի մէջ, և միաւորեց իւր Աստուածային անձին և բնութեան հետ. նա որ ճշմարիտ Աստուած էր՝ հօր յԱստուծոյ 'ի յաւիտենից ծնուած, նոյն ինքն ճշմարիտ մարդ դարձաւ, և ծընաւ սուրբ կուսէն հոգւով սրբով ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Հ. Բանն Աստուած իւր մարդեղութիւնից յետոյ քանի՞ անձն և քանի՞ բնութիւն ունէր:

Պ. Մի միայն էր անձն 'ի Քրիստոս, և այն Աստուածային և ոչ մարդկային. իսկ բնութիւնք երկու էին, Աստուածային և մարդկային՝ անշփոթ և անբաժան միաւորուած միմեանց հետ մէկ անձին մէջ, և այս-

պիսի սքանչելի միաւորութեամբ Քրիստոս Տէրն մեր կատարեալ մարդ էր՝ կատարեալ Աստուածութեամբ: «Թէպէտ յղացաւ որպէս մարդ, այլ Հոգւով սրբով՝ որպէս Աստուած. քաղցեաւ որպէս մարդ, և զմեռեալս յարուցանէր Աստուածային զօրութեամբ որպէս Աստուած . . . . չարչարեցաւ անչարչարելին չարչարելի բնութեամբս 'ի վերայ խաչին. մեռաւ որպէս մարդ, և յարեաւ որպէս Աստուած». Ներս. Շնորհ:

Հ. Կրնց նա մարդկային կիրք:

Պ. Այո՛. յանձն առաւ նա մեր մարդկային բնութեան ամէն կիրքերը՝ բաց 'ի մեղայ, զոր օրինակ քաղցեցաւ, ծարաւեցաւ, արտմեցաւ, արտասուեց, վախեցաւ և այլն: Իդն. մեկն. Ղուկ. ԻԲ, 42:

Հ. Քանի՞ կամք և քանի՞ ներգործութիւն ունէր Քրիստոս:

Պ. Երկու, Աստուածային և մարդկային, ինքն Աստուած և մարդ գոլով, երբ կամենում էր՝ Աստուածապէս էր գործում, և երբ կամենում էր՝ մարդկապէս:

Հ. Բանն Աստուած միածին Որդին իւր մարդեղութիւնից յետոյ ի՞նչ կոչուեցաւ:

Պ. Կոչեցաւ անուն նորա Ցիսուս (Փրկիչ) որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն. «Ցորմէ ծնաւ Ցիսուս, որ անուանեցաւ Քրիստոս (օծեալ)». Մատթ. Ա, 16: «Գիտեմք՝ զի Մեսսիա (օծեալ) գայ, անուանեալն Քրիստոս». Յովհ. Դ, 25: «Կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած». Մատթ. Ա, 23:

Հ. Ո՞ր ազգի բառեր են և ի՞նչ են նշանակում:

Պ. Յիսուս, Մեսիա, Լիմանուել Եբրայեցւոց բառեր են. իսկ Քրիստոս Յունաց բառ է: Յիսուս, նշանակէ Փրկիչ. Քրիստոս և Մեսիա՝ Օծեալ. Լիմանուել՝ ընդ մեզ Աստուած:

Հ. Ի՞նչ պատճառաւ նա կոչուեցաւ Փրկիչ:

Պ. Այն պատճառաւ որ փրկեց մարդկային ազգը մեղքից և սատանայի իշխանութիւնից. "Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց". Մատթ. Ա, 21: "Փրկեաց զմեզ յիշխանութենէ սատանայի". Կող. Ա, 13:

Հ. Ի՞նչի համար կոչուեցաւ Օծեալ:

Պ. Առաջինը՝ որ Աստուածութեան անձնաւորական միաւորութիւնը մարդկութեան հետ՝ Օծութիւն կասուի. "Քրիստոս անուանդ . . . . . առ մեզ Օծեալ թարգմանի, այսինքն Աստուած և մարդ. վասն զի Աստուածութեամբն էօծ զմարդկութիւնն". Խոսր. մեկն ժամ: Երկրորդ՝ որ Հոգւով սրբով օծուեցաւ նա Ճշմարիտ Քահանայ, Մարգարէ և Թագաւոր. "Արդ Ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայելի, զի Տէր զնա և օծեալ Աստուած արար, զայն Յիսուս զոր դուքն խաչեցիք". Գործ. Բ, 36: Դ, 38:

Հ. Ե՞րբ օծեց նորան Հոգին սուրբ:

Պ. Սկիզբը կուսի արգանդի մէջ, երբ ասաց նորան հրեշտակը. "Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լեսցի 'ի վերայ քո". Ղուկ. Ա, 35: Եւ յետոյ մկրտութեան ժամանակը, երբ Հոգին սուրբ աղաւնակերպ իջաւ նորա վերայ. Ղուկ. Դ, 21: Որով և կացուցաւ Ճշմարիտ Քահանայապետ, Մարգարէ 'ի վեր քան զամենայն մարգարէս և Թագաւոր յաւիտենական:

Հ. Ե՞րբ և ի՞նչպէս կատարեց նա Քահանայի պաշտօնը:

Պ. Այդ պաշտօնը կատարեց նա խոնարհութեան վիճակի մէջ, և իբրև Ճշմարիտ Քահանայապետ՝ իւր անձը խաչի վերայ պատարագ բերաւ մարդկանց փրկելու համար. "Եւ անուանեցաւ յԱստուծոյ Քահանայապետ յաւիտենից . . . ". Եբր. Ե, 10: Եւ միջնորդ և բարեխօս եղաւ առ Աստուած. "Եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատ". Ա, Յովհ. Բ, 1:

Հ. Մարգարէի պաշտօնը ի՞նչպէս կատարեց:

Պ. Իբրև մարդարէ՝ հօր Աստուծոյ կամքը և պատգամները մեկնեց, արքայութեան ճանապարհը սովորեցրեց, և յաւիտենական կեանք խոստացաւ մեզ. "Վարդապետ, գիտեմք զի Ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ Ճշմարտութեամբ ուսուցանես". Մատթ. ԻԲ, 16: Այս են աւետիքն զոր աւետարանեաց նա մեզ, զկեանսն յաւիտենականս". Ա. Յովհ. Բ, 25:

Հ. Թագաւորի պաշտօնը ի՞նչպէս կատարեց:

Պ. Իբրև Թագաւոր՝ յաղթեց մեզաց թագաւորութեանը. "Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի". Մատթ. ԻԸ, 18: Իւր մահուամբ և յարութեամբ տիրեց բոլոր մարդկանց. "Քրիստոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց առ հասա-

բակ տիրեսցէ», Հռովմ. ԺԴ, 9: Եւ Տէր և Աստուած դաւանեցաւ. «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, և ամենայն լեզու խոստովանեսցի, եթէ Տէր Յիսուս Քրիստոս է 'ի փառս Աստուծոյ Հօր». Փիլ. Բ, 10—11:

Հ. Յիսուս Քրիստոս ինչպէս կատարեց իւր Փրկագործութիւնը:

Պ. Կատարելով հայրական ցնծրէնութիւնքը:

Հ. Ցնծրէնութիւնք ասելով ինչ ես իմանում:

Պ. Ցնծրէնութիւնք ասելով՝ իմանում եմ Քրիստոսի մարդեղութեան խորհուրդները, այսինքն նորա ցաղութիւնը, ծնունդը, մկրտութիւնը, քարոզութիւնը, հրաշագործութիւնը, չարչարանքը, մահը, յարութիւնը, համբարձումը և նստիլը Հօր Աստուծոյ աջ կողմը:

Զ.

Միւս անգամ գալուստ Քրիստոսի.

Հ. Սուրբ գիրքը ինչ է սովրեցնում մեզ Քրիստոսի միւս անգամ գալստեան համար:

Պ. Թէ աշխարհիս վերջը միւսանգամ պէտք է գայ. «Այս Յիսուս՝ որ վերացաւն 'ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ՝ զոր օրինակ տեսէք զնա երթալ յերկինս». Գործ. Ա, 11:

Հ. Ի՞նչ է հրամայում Քրիստոս վերջին դատաստանի համար:

Պ. «Եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի նորա և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ 'ի յարութիւն դատաստանաց». Յովհ. Ե, 28—29:

Հ. Սուրբ գիրքը ինչ է սովրեցնում Քրիստոսի անվախճան թագաւորութեան համար:

Պ. «Սա եղիցի մեծ, և Որդի բարձրելոյ կոչեսցի, եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի Հօր նորա, և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ 'ի յաւիտեան, և թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի». Ղուկ. Ա, 32—33:

Հ. Նորա երկրորդ գալուստը այնպէս կլինի ինչպէս որ առաջինը:

Պ. Ոչ. առաջինը ծառայական կերպիւ էր, բայց երկրորդը կլինի փառաւոր կերպիւ դատելու մեզ. «Եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք՝ և ամենայն հրեշտակք ընդ նմա». Մատթ. ԻԵ, 31:

Հ. Ո՞ւմ պէտք է դատէ և ինչպէս:

Պ. Բոլոր կենդանեաց և մեռելոց. «Եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ զզ խորհուրդս սրտից, և ապա զովութիւն եղիցի յԱստուծոյ». Ա. Կորն, Դ, 5:

Հ. Ե՞րբ պիտի գայ Քրիստոս դատելու:

Պ. Ժամանակը յայտնի չէ, այլ պէտք է միշտ պատրաստ

լինինք և սպասենք. "Արթուն կացէք, զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն". Մատթ. ԻԵ, 13: "Ոչ յամենցուսցէ ՏԷր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համարին. այլ երկայնամիտ լինի առ ձեզ, քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ ամենեցուն հասանել յապաշխարութիւն: Այլ եկեսցէ օր Տեառն իբրև գող, յորում երկինք տագնապաւ անցցեն, և բնութիւնք հրով կիզեալ լուծցին, և երկիր՝ և որ 'ի նմա գործք գտանիցեն". Բ. Պետ. Գ, 9—10:

Է.

Աստուածութիւն Հոգւոյն սրբոյ եւ իշխումն նորա ի յորդանան.

Հ. Սուրբ գիրքը ինչ է սովրեցնում Հոգւոյն սրբոյ Աստուածութեան համար:

Պ. Սուրբ գիրքը սովրեցնում է՝ թէ երրորդ անձն սուրբ Երրորդութեան Հոգին սուրբ ճշմարիտ Աստուած է և հօր և Որդւոյ համագոյակից. "Երեք են որ վկայեն յերկինս, Հայր, Բանն, և Հոգի սուրբ". Ա. Յովհ. Ե, 7:

Հ. Ո՞րպիսի կատարելութիւններ է ընծայում նորան սուրբ գիրքը:

Պ. Ամենուրեքութիւն. "Ես յո՞ երթայց 'ի Հոգւոյ քումմէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց". Սաղ. ՃԼԹ., 7, 8:

Ամենագիտութիւն. "Այլ յայտնեաց մեզ Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ". Ա. Կորն. Բ, 10:

Արարչագործութիւն. "Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ . . . . և Հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջուրց". Ծնն. Ա, 2:

Յայտնութիւն. "Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ երբէք մարգարէութիւն, այլ 'ի Հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մարդիկ յԱստուծոյ". Բ. Պետ. Ա, 21:

Ուսուցչութիւն. "Այլ մեք ոչ զՀոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զՀոգին որ յԱստուծոյ է, զի ծանիցուք զայն, որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ". Ա. Կորն. Բ, 12:

Վկայութիւն և բարեխօսութիւն. "Նոյն ինքն Հոգին վկայէ Հոգւոյ մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ: Ինքն Հոգին բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմռունչս". Հռովմ. Ը, 16:

Հ. Ումի՞ց է առաջ գալիս Հոգին սուրբ:

Պ. Ինքն Քրիստոս այսպէս հրամայեց Հոգւոյն սրբոյ յառաջ գալու համար. "Յորժամ եկեսցէ մխիթարիչն զոր ես առաքեցից առ ձեզ 'ի հօրէ, Հոգին ճշմարտութեան՝ որ 'ի հօրէ ելանէ, նա ուսուսցէ ձեզ վասն իմ". Յովհ. ԺԵ, 26:

Հ. Ե՞րբ իջաւ Հոգին սուրբ 'ի Յորդանան:

Պ. Երբ մկրտուում էր Յիսուս. "Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի, և ահա բացան

նմա երկինք, և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի, և գայր 'ի վերայ նորա». Ղուկ. Գ, 13—16:

Հ. Ի՞նչի համար իջաւ Հոգին սուրբ:

Պ. Վկայելու՝ թէ նա է ճշմարիտ Որդին Աստուծոյ, որ պէտք է գար աշխարհը. «Սա է որ եկն ջրով և հոգւով և արեամբ, Յիսուս Քրիստոս, ոչ ջրով միայն, այլ և արեամբ և ջրով. և Հոգին է որ վկայէ, զի Հոգին իսկ է ճշմարտութիւն». Յովհ. Ե, 6:

Ը.

Եկեղեցի Քրիստոսի եւ խորհուրդք նորա.

Հ. Ի՞նչ է եկեղեցին, և ո՞ր ազգի բառ է:

Պ. Եկեղեցի բառս, Յունարէն էքլիսիա', նշանակում է Քրիստոսի հաւատացելոց ժողովը, կամ Քրիստոսի ժողովուրդը:

Հ. Քրիստոսի եկեղեցին քանի՞ է բաժանւում:

Պ. Երկու. Զինուորական և Յաղթական:

Հ. Ո՞րն է Զինուորեալը:

Պ. Զինուորեալ եկեղեցին է կենդանի հաւատացելոց ժողովը, որոնք ինչպէս զինուոր Քրիստոսի՝ հոգևոր զէնքով (հաւատով, Աստուծոյ պատուիրանքներ պահելով, եկեղեցւոյ խորհուրդներ ընդունելով և բարեգործութիւն առնելով) պատերազմում են մեղաց, աշխարհի և սատանայի դէմ. «Թէպէտ և մարմնով գնամք, այլ ոչ ըստ մարմնոյ զինուորիմք. զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ առ 'ի քակելոյ զամուրս». Բ. Կորն. Ժ, 3—4:

Հ. Ո՞րն է Յաղթական եկեղեցին:

Պ. Յաղթականը՝ սուրբ ննջեցելոց ժողովն է, որոնք յաղթեցին մեղաց թագաւորութեանը, և այնպէս փոխուեցան այս աշխարհից. «Զբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի, այսուհետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն». Բ. Տիմ. Գ, 7:

Հ. Քրիստոսի եկեղեցին քանի՞ նշան կամ յատկութիւն ունի:

Պ. Չորս. վասն զի է Մի, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական:

Հ. Ի՞նչ պատճառաւ ասում ենք Մի:

Պ. Այն պատճառաւ որ՝ նորա ամէն անդամքը — ամենայն քրիստոնեայք՝ հոգևոր և ներքին միութեամբ հաւատոյ, յուսոյ և սիրոյ՝ իբրև մէկ մարմին՝ կապուած են իւրեանց մէկ Գլխոյ՝ Քրիստոսի հետ. «Բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս». Հռովմ. Ժ, 5:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչւում է Սուրբ:

Պ. Առաջին որ՝ Քրիստոսի եկեղեցւոյ բոլոր ուսմունքը սուրբ, մաքուր և անարատ են. «Փրկեաց զմեզ և կոչեաց 'ի կոչումն սուրբ». Բ. Տիմ. Ա, 9:

Երկրորդ՝ նորա բոլոր անդամքը — ամենայն քրիստոնեայք՝ սրբուած են սկզբնական մեղքից Մկրտութեամբ.

«Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և մատնեաց զանձն իւր վասն նորա, զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ». Եփես. Ե, 25—27:

Հ. Ինչի՞ է կոչւում Կաթողիկէ կամ Ընդհանրական:

Պ. Այն պատճառաւ որ Ա. Քրիստոսի եկեղեցին անխըտիր առանց ընտրութեան ո՞ր ազգ և ո՞ր լեզու էլ լինի կամեցողը մտնել եկեղեցւոյ ծոցը՝ սիրով ընդունում է նորան. «Ոչ ինչ ընտրութիւն արար (Աստուած) 'ի մէջ նոցա և 'ի մէջ մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա». Գործ. ԺԵ, 9: «Որք միանգամ 'ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք. չէք խտիր, ո՞չ հրէի և ոչ հեթանոսի . . . . զի ամենեքեան դուք մի էք 'ի Քրիստոս Յիսուս». Գաղ. Գ, 27: Բ, որ Քրիստոսի եկեղեցին տարածուած է աշխարհիս երեսին ամէն տեղ. «Քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս 'ի վկայութիւն ամենայն հեթանոսաց». Մատթ. ԻԴ, 14: Եւ Գ, անընդհատ պիտի շարունակուի մինչև աշխարհիս վերջը. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև 'ի կատարած աշխարհի». Մատթ. ԻԸ, 20:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչեցաւ Առաքելական:

Պ. Այն պատճառաւ որ Քրիստոսի եկեղեցին հաստատուած է առաքելոց քարոզութեան հիման վերայ. «Այսուհետև ո՛չ էք օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք և ընտանիք Աստուծոյ. շինեալք 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս». Եփես. Բ, 19—20:

Հ. Ի՞նչ են խորհուրդք եկեղեցւոյ:

Պ. Քրիստոսից սահմանած սուրբ արարողութիւնք են, որ երևելի նշաններով արժանապէս ընդունողքը առնում են յԱստուծոյ Հոգւոյն սրբոյ շնորհքը:

Հ. Այս սուրբ արարողութիւնքը ի՞նչ պատճառաւ կոչուեցան խորհուրդ:

Պ. Բառս խորհուրդ՝ նշանակում է գաղտնիք, ծածուկ բան, այն պատճառաւ որ արարողութիւնքը երևելի են, իսկ Աստուծոյ շնորհքը անտեսանելի:

Հ. Քանի՞ են խորհուրդք եկեղեցւոյ:

Պ. Եօթն.

Մկրտութիւն:
Դրոշմ:
Աւազանութիւն:
Հաղորդութիւն:
Աւանդութիւն:
Կարգ կամ Ձեռնադրութիւն:
Օծումն հիւանդաց:

Հ. Ո՞վ հաստատեց այդ խորհուրդքը:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Հ. Ո՞յք են այդ խորհրդոց կատարողքը:

Պ. Եկեղեցւոյ սրբազնագործ պաշտօնեայք. բայց կարգը տալիս է եպիսկոպոսը, իսկ միւս խորհուրդքը կատարում են քահանայք կամ եպիսկոպոսունք ևս:

Հ. Այդ խորհուրդներից ո՞յք անպատճառ հարկաւոր են ամենայն հաւատացելոց փրկութեան համար:

Պ. Առաջին՝ Մկրտութիւնը. «Որ ոք ոչ ծնցի 'ի ջրոյ և

'ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ». Յովհ. Գ, 5: Երկրորդ՝ Դրոշմը. «Ոչ է հնար առանց դրոշմի զրիլ Քրիստոսեան». Նար, զլ. ՂԳ: Երրորդ՝ Ապաշխարութիւնը. «Եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս և կորնչիցիք». Ղուկ. ԺԳ, 3: Չորրորդ՝ Հաղորդութիւնը. «Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս». Յովհ. Զ, 54: Իսկ վերջին երեքն ոչ ամենեցուն են հարկաւոր, այլ ոյք կցանկան կամ արժանաւոր կհամարուին: Ա, Ամուսնութիւն. «Եթէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին». Ա. Կորնթ. Է, 9: Բ, Կարգը. «Եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ». Ա. Տիմոթ. Գ, 1: «Զեռս վաղվաղակի յուրուք վերայ մի' դնիցես». Ա. Տիմոթ. Ե, 22: Գ, Օծումն հիւանդաց. քանիցս որ մարդ մերձ 'ի մահ հիւանդանայ՝ կարող է ընդունել այս խորհուրդը. «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ. կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն, և աղօթս արասցեն 'ի վերայ հիւանդին . . . . . ». Յակոբ. Ե, 14:

Հ. Այս խորհուրդներից ո՞յք կ'կրկնուին և ո՞յք ոչ:

Պ. Անկրկնելի են Մկրտութիւնը. «Մի Տէր, մի Հաւատ, մի Մկրտութիւն». Եփես. Դ. 5: «Նմանապէս Դրոշմն և կարգն», Անզեղջ են (անդառնալի, անփոփոխելի) շնորհքն և կոչումն Աստուծոյ». Հռովմ. ԺԱ, 29: Իսկ մնացեալ չորսը ամէն հարկաւոր և յարմար ժամանակը կարող է մարդ ընդունել. «Եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, եղբայր քո, և եօթն անգամ դարձցի 'ի քեզ և

ասիցէ՝ ապաշխարեմ, թողցես նմա». Ղուկ. ԺԷ, 4: «Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք». Ա, Կորնթ. ԺԱ, 26:

Հ. Ի՞նչ է Մկրտութիւնն:

Պ. Մկրտութիւնն է խորհուրդ եկեղեցւոյ, որ նշանակում է ջրով լուացումն յԱնուն ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որով մարդ կրկին ծնւում է հոգւով». Զի որպէս Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց փառօք Հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգումն կենաց շրջեսցուք». Հռովմ. Զ, 4: Սրբւում է սկզբնական մեղքից. «Զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ». Եփես. Ե, 26: Եւ որդեզիր է լինում երկնաւոր Հօր. «Այսուհետև չէս ծառայ, այլ որդի. եթէ որդի, և ժառանգ Աստուծոյ». Գաղ. Դ, 7:

Հ. Երբ հաստատեց Քրիստոս այդ խորհուրդը:

Պ. Երբ ինքն մկրտուեցաւ Յորդանան գետի մէջ, և իւր Յարութեան յետոյ հրամայեց առաքելոց. «Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». Մատթ. ԻԸ, 19:

Հ. Ինչպէս է կատարւում մեղանում Մկրտութեան խորհուրդը:

Պ. Երեք անգամ երեխայն ընկղմելով աւազանի մէջ, մի անգամ ասելով յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, յօրինակ մահուան և երեքօրեայ թաղման Քրիստոսի գերեզմանի մէջ. «Որք միանգամ մկրտ-

տեցաք 'ի Քրիստոս Յիսուս, 'ի մահ անդր նորա մկրտեցաք». Հռովմ. Զ, 3:

Հ. Ի՞նչ է Դրոշմն:

Պ. Դրոշմն է եկեղեցւոյ խորհուրդ, որ քահանայի աղօթքով և մեռոնով օծելով մկրտուածի ճակատը, սիրտը, թիկունքը և միւս զգայարանքը՝ նորընծայ հաւատացեալն այն ընդունում է Հոգւոյն սրբոյ շնորհք, որով զօրանում է և հաստատւում քրիստոնէական հաւատոյ և պատուիրանապահութեան մէջ, և Քրիստոսի զինուոր գրւելով՝ կոչւում է Քրիստոնեայ. «Որ հաստատեաց զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս, և որ օծ զմեզ Աստուած է: Որ և կնքեաց զմեզ, և ետ առհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր». Բ. Կորնթ. Ա, 21—22:

Հ. Երբ սկսաւ և ինչպէս հաստատեցաւ Դրոշմի խորհուրդը:

Պ. Երբ Հոգին սուրբ իջաւ Յորդանան գետը Յիսուսի վերայ, և հաստատեցաւ նորա Յարութեան յետոյ Պենտեկոստէի (յիսներորդ) տօնի օրը, երբ Հոգին սուրբ իջաւ առաքելոց վերայ. «Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ, և դուք նստարուք 'ի քաղաքիդ Երուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց». Ղուկ. ԻԴ, 48: «Եւ 'ի կատարել աւուրցն Պենտեկոստէից . . . . լցան ամենեքեան Հոգւով սրբով». Գործ. Բ, 1, 4:

Հ. Առաքեալք ինչպէս էին կատարում, և այժմ ինչպէս է կատարւում մեզանում այդ խորհուրդը:

Պ. Առաքեալք կատարում էին ձեռը դնելով և աղօթելով. «Յայնժամ եդին զձեռս 'ի վերայ նոցա, և առնուին զՀոգի սուրբ». Գործ. Ը, 17: Իսկ այժմ մեզանում կատարւում է՝ ճակատը, սիրտը, թիկունքը և միւս զգայարանքը սուրբ մեռոնով օծելով և աղօթելով յանուն Յիսուսի:

Հ. Ի՞նչ է Ապաշխարութիւնն:

Պ. Ապաշխարութիւնը եկեղեցւոյ խորհուրդ է, որ մեզաւոր և զղջացած քրիստոնեայն խոստովանւում է Աստուծոյն՝ քահանայի առաջ՝ իւր մեղքերը և նորա միջնորդութեամբ ընդունում է յԱստուծոյ թողութիւն, և սրբւում է այն մեղքերից որ մկրտութենէն յետոյ գործել է. «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն». Ղուկ Ե, 32:

Հ. Երբ հաստատեցաւ Ապաշխարութեան խորհուրդը:

Պ. Երբ փչեց Յիսուս առաքելոց սուրբ Հոգին, և տուաւ նոցա իշխանութիւն մեղքերը թողնելու. «Փչեաց 'ի նոսա և ասէ, առէք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի». Յովհ. Ի, 22—23:

Հ. Ի՞նչպէս պիտոյ է կատարել այդ խորհուրդը:

Պ. Կատարեալ զղջմամբ. «Լուեալ զայս՝ զղջացան 'ի սիրտս իւրեանց, և ասեն ցՊետրոս և ցայլ առաքեալսն. զի՞նչ գործեսցուք, ա՛րք եղբարք: Ասէ ցնոսա Պետրոս. ապաշխարեցէք», Գործ. Բ. 37, 38: Եւ խոստովանելով քահանայի առաջ բոլոր մեղքերը. «Բազումք 'ի հաւատացելոց գային և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց». Գործ. ԺԹ, 18: Եւ յուսալով ընդունել յԱստուծոյ թողութիւն Քրիստոսի չարչարա-

նաց արդեամբքը. "Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով ա-
բեամբն զժողովուրդն արտաքոյ դրանն չարչարեցաւ».
Եբր. ԺԳ, 12:

Հ. Ամենայն մեղաց թողութիւն կլինի Ապաշխարութեամբ:

Պ. Այո. Աստուած խոստացել է՝ կամենում է, և կարող է
սրբել մեզ ամէն մեղաց, երբ մենք մեզէն սրտանց
խոստովանենք մեր մեղքերը. "Ապա եթէ խոստովան
լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ
'ի թողուլ մեզ զմեղս մեր, և սրբել զմեզ յամե-
նայն անիրաւութենէ». Ա. Յովհ. Ա, 9:

Հ. Ի՞նչ է Հաղորդութիւնն:

Պ. Հաղորդութիւնն է եկեղեցւոյ Խորհուրդ, որ հացի
տեսակաւ ճաշակում ենք Քրիստոսի մարմինը, և գին-
ւոյ տեսակաւ խմում ենք նորա արիւնը, որով սրբւում ենք
մեղքից. "Արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ
յամենայն մեղաց». Ա. Յովհ. Ա, 7: Միանում ենք
Քրիստոսի հետ հոգւով. "Որ ուտէ զմարմին իմ և
ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես 'ի նմա».
Յովհ. Զ, 57: Եւ ժառանգակից ենք լինում յաւի-
տենական կենաց. "Որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ
յաւիտեան». Անդ. 58:

Հ. Երբ հաստատեց Քրիստոս Հաղորդութեան Խոր-
հուրդը:

Պ. Բաղարջակերաց տօնի առաջին օրը, երբ ընթրեաց
վերայ առաւ հացը, օրհնեց, և տուաւ աշակերտաց
ասելով. "Առէք կերէք, այս է մարմին իմ»: Նոյնպէս
առաւ բաժակը, գոհացաւ և տուաւ նոցա ասելով՝

"Արբէք 'ի սմանէ ամենեքեան. այս է արիւն իմ Նո-
րոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողու-
թիւն մեղաց». Մատթ. Իզ, 26—27:

Հ. Ինչո՞վ է կատարւում մեզանում այդ Խորհուրդը:

Պ. Բաղարջ հացով և անջրախառն գինեաւ, ինչպէս որ
աւանդել է մեզ սուրբ Գրիգոր լուսաւորիչը. Յովհ.
Իմաստ, Ը, կան:

Հ. Ի՞նչ հաւատալի բան կայ այս Խորհրդոյ մէջ:

Պ. Այս է հաւատալին, որ այն հացը ընդունում ենք
իսկապէս Քրիստոսի մարմին, և գինին իսկապէս Քը-
րիստոսի արիւն. "Հաւատալ զփրկական խորհուրդն՝
ստուգապէս մարմին և արիւն Քրիստոսի, որով միա-
նամք 'ի Քրիստոս, և ժառանգակից նորուն լինիմք».
Ն. Լամբ. մեկ. Պատ:

Հ. Այս Խորհուրդ ընդունողը ո՞րպիսի պատրաստու-
թիւնք պիտի ունենայ:

Պ. Ամենայն ծանր և մահացու մեղքերից ազատ պէտք
է լինի, բոլորովին հրաժարուած ամենայն անկարգ
մարմնական ցանկութեանց, և ջերմ փափաղ պիտի
ունենայ նուիրելու իւր անձը Աստուծոյն, և մնայ
միշտ նորա պատուիրանապահութեան մէջ. "Փոր-
ձեսցէ մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կե-
րիցէ, և 'ի բաժակէն արբցէ». Ա. Կորն. ԺԱ, 28:

Հ. Ի՞նչ է Ամուսնութիւնն:

Պ. Է Խորհուրդ եկեղեցւոյ, որ այր և կին հաւատացեալ
միմեանց հաւանութեամբ, աղօթիւք և օրհնու-
թեամբ քահանայի լծակցւում են, յօրինակ հոգևոր

միաւորութեան Քրիստոսի եկեղեցւոյ հետ, զաւակ ծնանելու. և սնուցանելու նոցա քրիստոնէական հաւատոյ և Աստուծոյ պատուիրանապահութեան մէջ. «Արք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա . . . . Եփես. Ե, 25, 29: «Արու և էգ արար զնոսա, և օրհնեաց զնոսա Աստուած՝ և ասէ. աճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր». Ծննդ. Ա, 28:

Հ. Երբ հաստատեցաւ այդ խորհուրդը:

Պ. Երբ Քրիստոս վճռելով ասաց. «Զիցէ՞ ընթերցեալ ձեր, թէ որ հաստատեաց 'ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա և ասէ, վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին 'ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու, այլ մի մարմին, արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ». Մատթ. ԺԹ, 4. 5:

Հ. Ի՞նչ է կարգն կամ ձեռնադրութիւնն:

Պ. Է խորհուրդ եկեղեցւոյ, որ եպիսկոպոսը ընծայելոյն վերայ ձեռը դնելով՝ աղօթիւք, և մեռոնով օծմամբ տալիս է նորան հոգևոր պաշտօն առ 'ի հովուել ժողովուրդը, ուսուցանել և եկեղեցւոյ սուրբ խորհուրդները կատարել. «Ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատով և Հոգւով սրբով, զՓիլիպպոս, զՊրոքորոն . . . . զոր կացուցին առաջի առաքելոցն, և աղօթս արարեալ եդին 'ի վերայ նոցա զձեռս». Գործ. Զ, 5. .7: Եւ որդւոցն Ահարոնի արասցես պատմուճանս և կամարս և խոյրս, և զգեցուսցես զայն եղբօր քում Ահարոնի

և որդւոց նորա ընդ նմա: Եւ օծցես զնոսա, և լցես զձեռս նոցա, և սրբեսցես զնոսա, զի քահանայասցին ինձ». Ել. ԻԸ, 40. 41: «Եւ զոր եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. Նախ՝ զԱռաքեալս, երկրորդ՝ զՄարգարէս, երրորդ՝ զՎարդապետս». Ա. Կորն. ԺԲ, 28:

Հ. Երբ հաստատեց Քրիստոս կարգի խորհուրդը:

Պ. Երբոր վերանումէր երկինքը. «Եհան զնոսա 'ի գլուխ լերինն . . . և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց: Եւ եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յերկինս». Ղուկ. ԻԴ, 50. 51:

Հ. Կարգն ունի՞ աստիճաններ:

Պ. Այո. որպէս հնուն քահանայապետք, քահանայք և ղևտացիք, նոյնպէս նորումն. «Եդ (Աստուած) զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս, 'ի հաստատութիւն սրբոց, 'ի գործ պաշտաման և 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի». Եփես. Դ, 11. 12:

Հ. Կարգը քանի՞ աստիճան ունի:

Պ. Ինն. Դռնապանութիւն. Ընթերցողութիւն. Երգմեցուցչութիւն. Ջահընկալութիւն. Կիսասարկաւագութիւն. Սարկաւագութիւն. Քահանայութիւն. Եպիսկոպոսութիւն և Կաթողիկոսութիւն կամ Պատրիարքութիւն:

Ծանօթ. Դռնապանի պաշտօնն է եկեղեցւոյ դռները պահել և ներս չթողուլ, որոց արգելած է ներկայ գտնուիլ 'ի ժամ պատարագին. և առհասարակ բանալ և փակել և մաքրել եկեղեցին

Ընթերցողին է մարգարէական և առաքելական գրեանց ընթեռնուլ և արդելածներին նշանակել 'ի գիր:

Երդմնեցուցչին, դիւահարները երդմնեցնել, ձեռը դնելով դեւերը հալածել, ուսուցանել և մատուցանել ի մկրտութիւն:

Ջանրնկալին, աչտանակ առնուլ ձեռին մոմեր վառելու աւետարան կարդալու ժամանակը. և առհասարակ ջահեր վառել և լուսաւորել եկեղեցին:

Կիսասարկաւագին, սուրբ անօթներ մատուցանել քահանային. զգեստաւորել պատարագիչը, և որպէս օգնական սարկաւագին, ծառայել Աստուծոյ տանը:

Սարկաւագի պաշտօնն է բաց ի խորհրդոց եկեղեցւոյ, միւս սրբազնագործութիւնք կատարել, այն է վերաբերումն, աւետարան և քարոզ կարդալ, նոյնպէս նուէրը մատուցանել պատարագիչ քահանային և սրբազան պաշտամանց մերձենալով, սպասաւորել սուրբ սեղանին:

Քահանայի պաշտօնն է կատարել եկեղեցւոյ խորհուրդքը և միւս սրբազնագործութիւնքը, բաց ի կարգէն կամ ի ձեռնադրութենէն, այլև ուսուցանել և հովուել Քրիստոսի հօտը:

Հ. Ի՞նչ է Եպիսկոպոսութիւնն:

Պ. Եպիսկոպոսութիւնն է հոգևոր տեսչութիւն՝ մի առանձին վիճակ կառավարելու, կարգ և կանոն պահելու նոյն վիճակի բոլոր եկեղեցականաց և եկեղեցեաց մէջ, պետ և գլուխ լինելու իւրեան յանձնած վիճակի եկեղեցեաց և բոլոր սպասաւորաց վերայ, այլ և կարգի եօթն աստիճան տալու, ուստի կոչւում է Քահանայապետութիւն:

Հ. Ի՞նչ է Կաթողիկոսութիւնն:

Պ. Կաթողիկոսութիւնն է ընդհանրական, ծայրագոյն հոգևոր տեսչութիւն, մի ամբողջ ազգի բոլոր եկեղեցիքը և եկեղեցականքը կառավարելու, կարգ և կանոն տալու, մեռոն օրհնելու և եպիսկոպոս ձեռնադրելու. ուստի կոչւում է Եպիսկոպոսապետութիւն:

Հ. Կարգ ընդունողը ո՞րպիսի յատկութիւնք կամ արժանաւորութիւնք պարտի ունենալ:

Պ. Պարտի ունենալ սրբութիւն և անարատութիւն վարքուց, և վկայեալ լինի ժողովուրդից վարքուց և բարքուց մաքրութեան և սրբութեան համար. "Պարտ է նմա վկայութիւն բարի և յարտաքնոցն ունիլ . . . Ունիցին զնորհուրդս հաւատոցն սուրբ մտօք, ինքեանք նախ փորձեսցին, և ապա 'ի պաշտօնն մատիցեն, զի անարատք իցեն". Ա. Տիմ. Գ. 7, 9: Եւ բաւական գիտութիւն, որ կարող լինին ուսուցանել և այլոց. "Եւ զոր լուեալ յինէն բազում վկայիւք, զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց՝ որք բաւական իցեն և զայլս ուսուցանել". Բ. Տիմ. Բ, 2:

Հ. Ո՞յք համարին անարժանք կարգի:

Պ. Անարժան համարին անուսումք և տգէտք. "Զի դու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ՝ զի մի' քահանայասցիս ինձ, ասէ Աստուած . . . Ովս. Դ, 6: Զարագործք և անչափահասք. "Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել . . . մի' թշնամանող, մի' հարկանող, մի' կռուող, մի' արծաթասէր . . . մի' մատաղատունկ . . . նոյնպէս և զսարկաւագունս պարկեշտս . . . մի' երկբանս, մի' գինեսէրս, մի' զօշաքաղս". Ա. Տիմ. Գ, 2: Եւ արտաւորք մարմնով կամ անդամովք, "Զի ամենայն այր՝ յորում իցէ արատ՝ մի' մատիցէ մատուցանել պատարագ Աստուծոյ իւրոյ:

Այր կաղ, կամ կոյր, կամ կարճունչ . . . . կամ ձեռնբեկ կամ ոտնբեկ կամ սապատոյն կամ շիլ կամ պղակն, ամենայն այր՝ յորում իցէ քոս կամ քաղցկեղ . . . . մի՝ մերձեսցի մատուցանել զհաց Աստուծոյ քում. զի արատ զոյ 'ի նմա». Ղևտ. ԻԱ, 16. 17. 18:

Հ. Ինչ է հիւանդաց օծումն:

Պ. Է խորհուրդ եկեղեցւոյ, որ քահանայն ձեռը դնելով և իւղով օծելով՝ աղօթք է անում հիւանդի վերայ, որով հիւանդը յԱստուծոյ ընդունում է մարմնոյ առողջութիւն և թեթև մեղաց թողութիւն». Ամենեքեան, որոց էին հիւանդք 'ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա, և նա իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա». Ղուկ. Դ, 4: Եւ օծանէին (առաքեալք) իւղով զբազում հիւանդս՝ և բժշկէին զնոսա». Մարկ. Զ, 13:

Հ. Երբ աւանդեց Քրիստոս այդ խորհուրդը:

Պ. Երբ առաքելոց տուաւ իշխանութիւն և զօրութիւն հիւանդաց բժշկելու. «Զհիւանդս բժշկեցէք». Մատ. Ժ, 8:

Հ. Առաքեալք ինչպէս էին կատարում այդ խորհուրդը:

Ո. Երբեմն միայն ձեռը դնելով և աղօթելով հիւանդի վերայ. «Եւ եղև հօրն Պողղեայ 'ի ջերմն . . . . հիւանդանալ դնել. առ որ մտեալ Պօղոս և կացեալ յաղօթս՝ եդ զձեռն, և բժշկեաց զնա». Գործ. ԻԸ, 8: Եւ երբեմն ևս՝ իւղով օծանելով յանուն Տեառն. «Օծանէին իւղով զբազում հիւանդս և բժշկէին զնոսա». Մարկ. Զ, 13:

Հ. Մեր Հայոց եկեղեցին ինչպէս է կատարում այդ խորհուրդը:

Պ. Այդ խորհուրդը մեր Հայոց եկեղեցին կատարում է միայն քահանայի աղօթիւք. «Աղօթքն հաւատով փրկեսցեն զաշխատեալն (հիւանդն): «Աղօթս արարէք 'ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք, քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոյ յօգնականութիւն». Յակ. Ե, 15:

Հ. Ինչ հիման վերայ խափանուած է մեզանում հիւանդաց իւղով օծանելը:

Պ. Այն հիման վերայ, Ա, որ ինքն Յիսուս Քրիստոս ձեռը դնում էր հիւանդի վերայ և բժշկում էր. «Ամենեքեան որոց էին հիւանդք . . . . բերէին զնոսա առ նա և նա դնէր զձեռս և բժշկէր զնոսա». Ղուկ. Դ, 4: Բ, որ Քրիստոս իւր առաքելոց աւանդեց այսպէս. «Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշկեսցեն զնոսա». Մարկ. ԺԶ, 18:

Ծանոթ. Առաքեալք հիւանդաց իւղով օծումն էին օրէնքից առին, ոչ թէ սովորութիւն ունէին սեղան, տաճար, քահանայք և թաղաւորք իւղով օծանել, որ կոչւում էր սրբութեան օծումն. բայց յետոյ չատերը հաւատացելոց աղօթքը զանց առնելով, հիւանդաց բժշկութիւնը իւղի ներգործութեանն էին վերաբերում. ուստի այս մտքով Յակոբոս առաքեալը հրամայեց, «Հիւանդանայցէ ոք ի ձէնջ, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն և աղօթս արասցեն ի վերայ հիւանդին. օծցեն իւղով յանուն Տեառն» Յակ. Ե, 14: Որով ցոյց է տալիս երկու զօրութիւն և բժշկութեան ներգործութիւն. մին հաւատով, քահանայի աղօթքը, և միւսը, իւղով օծումն, ուստի ասաց.

«Օծցին իւղով յանուն Տեառն»։ Պարզ հասկացնելու համար թէ Աստուծոյ անունն է տալիս հիւանդին բժշկութիւն, և ոչ թէ իւղը, որպէս հաստատումէ և Սարգիս Շնորհալին։ «Զորօրինակ առաքեալք զբժշկութիւնս զորս կատարէին, անուամբ Տեառն առնէին. «Յանուն Յիսուսի Քրիստոսի արի, և դնա, ի ծնէ կաղին ասաց». Գործ. Գ, 6։ Եւ թէ «Տարեալ, արի, կաց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». անդ. Թ, 40։ Ապա յայտ է թէ ոչ իւղն ասայր առողջութիւն հիւանդին, այլ անունն Տեառն». Սեկ. Կաթուղ. երես. 166։

Թ.

Յարութիւն մեռելոց

Հ. Ի՞նչ է մեռելոց յարութիւնը։

Պ. Յարութիւն մեռելոց ասելով իմանումենք՝ թէ ամենայն մեռելոց մարմինքը վերջին դատաստանի օրը իւրեանց հոգւոց հետ միաւորուելով, յարութիւն կառնեն. «Ունիմ յոյս առ Աստուած՝ որում և դոքա ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց». Գործ. ԻԳ, 15։

Հ. Ինչի՞ համար։

Պ. Կենդանեաց և մեռելոց դատելու համար. «Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աստենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւր մարմնով զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ չար». Բ, Կորն. Ե, 10։

Հ. Արդարոց մարմինքը ինչ յատկութիւնք կունենան յարութեան յետոյ։

Պ. Արդարք պայծառ կլինին իբրև արեգակն. «Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից». Մատթ. ԺԳ, 43։ Փառաւոր. «Յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք». Կող. Գ, 4։ Նուրբ և թեթև. «Պայծառասցին, և իբրև կայծակն ընդ եղէգն ընթասցին». Իմաստ. Գ, 7։ Անապական. «Սերմանի ապականութեամբ, և յառնէ առանց ապականութեան». Ա. Կորն. ԺԵ, 42։ Անցաւակիր. «Ոչ մահ, և ոչ աշխատանք ևս գոյ». Յայտ. ԻԱ, 4։ Անմահ. «Քանզի մեռանել ևս ոչ կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ». Ղուկ. Ի, 36։

Ժ.

Վերջին դատաստան

Հ. Ի՞նչ է վերջին դատաստանն։

Պ. Վերջին դատաստանն է Յիսուսի Քրիստոսի արդարադատ քննութիւնը, երբ միւսանգամ գայ աշխարհիս կատարածին. «Գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր». Մատթ. ԺԶ, 27։ Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն և վկայութիւն դնել, եթէ նա է սահմանեալն յԱստուծոյ, դատաւոր կենդանեաց և մեռելոց. քանզի սահմանեաց օր՝ յորում պարտ է դատել

զաշխարհս արդարութեամբ, 'ի ձեռն առն, որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ 'ի մեռելոց». Գործ. Ժ, 42:

Հ. Ի՞նչպէս պէտք է դատի:

Պ. Արդարքը մեղաւորներից կ'որոշէ, արդարոց իւրեանց վարձը կհատուցանէ, և մեղաւորաց իւրեանց պատիժը կտայ. «Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աստենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ գործեաց յառաջ. եթէ բարի և եթէ չար». Բ. Կորն. Ե, 10:

Հ. Ո՞րպիսի վարձ պէտք է տայ Աստուած արդարոց, և ո՞րպիսի պատիժ մեղաւորաց:

Պ. Արդարք կժառանգեն երկնից Արքայութիւնը. «Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որք ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն 'ի սկզբանէ աշխարհիս». Մատթ. ԻԵ, 34: Իսկ մեղաւորք կ'երթան յաւիտենական տանջանքը դժոխքի մէջ. «Ասասցէ և ցայնոսիկ՝ որք ընդ ահեկէն իցեն, երթայք յինէն, անիծեալք, 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա». անդ. 41:

Հ. Ի՞նչ է երկնից Արքայութիւնը:

Պ. Այնպիսի երանական վիճակ է, որ պատրաստել է Աստուած իւր սիրելեաց համար հանդերձեալ կենաց մէջ. «Զոր աչն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց». Ա. Կորն. Բ, 9:

Հ. Արդարք ո՞րպիսի վայելչութիւնք կունենան այն կենաց մէջ:

Պ. Դէմ յանդիման Աստուծոյ տեսութեան արժանի կլինին. «Գիտեմք զի յորժամ նա յայտնեացի՝ նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և է». Ա, Յովհ. Գ, 2: Քրիստոսի և հրեշտակաց և բոլոր սրբոց հետ կենակից կլինին. «Ապա և մեք որ կենդանեւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս, և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք». Ա. Թեսաղ. Դ, 16 «Բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն, և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակովբու յարքայութեան երկնից». Մատթ. Ը, 11:

Հ. Ի՞նչ է դժոխքը, կամ յաւիտենական դատապարտութիւնը:

Պ. Այնպիսի դառն և զարհուրելի վիճակ է, ուր անզեղջ մեղաւորք հոգւով և մարմնով յաւիտենական տանջանաց մէջ կլինին- «Երթիցեն նոքա 'ի տանջանսն յաւիտենականս» Մատթ. ԻԵ. 46:

Հ. Ո՞րպիսի պատիժներ պէտք է կրեն մեղաւորք այն կենաց մէջ:

Պ. Բոլորովին զրկուած կլինին Աստուծոյ տեսութենէն. «Եւ ասիցէ՝ ամէն ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք. 'Իբաց կացէք ամենայն մշակք անիրաւութեան». Ղուկ. ԺԳ, 27: Սաստիկ կտանջի խղճմտանքը. «Ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի». Մարկ.

Թ, 47: Խաւարի և սգոյ մէջ կլինին. "Եւ որդիքն արքայութեան ելցեն 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց". Մատթ. Ը, 12:

Հ. Ե՞րբ պէտք է լինի աշխարհիս կատարածը:

Պ. Ոչ ոք գիտէ ժամը և ժամանակը. "Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս և ոչ Որդի, բայց միայն Հայրն". Մարկ ԺԳ, 32:

Յոյս.

Հ. Ի՞նչ է Յոյսն:

Պ. Յոյսն է ակնկալելը և աներկբայ սպասելը այն ամէն բարութեանց, որ խոստացել է մեզ Աստուած". Բայց յաւետեացն ոչ երկմտեաց (Աբրահամ), այլ զօրացաւ հաւատովք . . . . . և հաստատեցաւ 'ի միտս իւր, թէ որ խոստացաւն՝ կարող է առնել". Հռովմ. Դ, 20-21: "Այլ և մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն ունիմք՝ անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն ակնկալեալ փրկութեան մարմնոյ մերոյ: Զի յուսով ապրեցաք, այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի զոր տեսանէ ոք՝ զի՞ ևս յուսայ. ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք". Հռովմ. Ը, 23, 24, 25:

Հ. Ո՞յք են նորա խոստացած բարութիւնքն:

Պ. Նորա խոստացած բարութիւնքն են յաւիտենական կեանք, հանգիստ, և անվախճան երանութիւն. "Եւ այս իսկ է վկայութիւնն. զի զկեանս յաւիտենական ետ

մեզ Աստուած. և այս են կեանքն, որ յորդին նորա են: Որ ընդունի զորդին, ընդունի և զկեանսն". Ա. Յովհ. Ե, 11, 12: "Եկայք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի". Մատթ. ԺԱ, 29. 30: "Նա՝ երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ և պահիցեն". Ղուկ. ԺԱ, 28:

Հ. Ե՞րբ, և ո՞ւմ բերնով խոստացաւ Աստուած այդ բարութիւնքը:

Պ. Առաջ մարգարէից բերանով, և յետոյ աւելի պարզիւր Որդւոյ Յիսուսի Քրիստոսի ձեռքով. "Կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք, 'ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի . . . . ." Եբր. Ա, 1. 2:

Հ. Քրիստոս ե՞րբ յայտնեց այդ խոստմունքը:

Պ. Երբ Յիսուս բարձրացաւ լերան վերայ, և նստաւ այնտեղ, և աշակերտքը մօտ գնացին. և իւր բերանը բաց արաւ և ուսուցանում էր նոցա, և ասում. "Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից:

Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին:

Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր:

Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի լցեն արդարութեան, զի նոքա յագեսցին:

Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն:
Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն:
Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին:
Երանի՛ այնոցիկ՝ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:
Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ, վասն իմ: Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս». Մատթ. Ե, 2, 13:

Աղօթք.

Հ. ԻնչովՀ կարող է մարդ մօտենալ Աստուծոյն և հաստատուիլ Հաւատոյ և Յուսոյ մէջ, և ընդունել յԱստուծոյ շնորհք և ողորմութիւն:

Պ. Աղօթքով. «Մատիցուք այսուհետև համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհաց նորա, զի ընկալցուք զողորմութիւն, և գտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան». Եբր. Դ, 16:

Հ. Ի՞նչ է Աղօթքն:

Պ. Աղօթքն է խնդրուածք առ Աստուած այն ամենայն բարեաց, որ ինչ պիտոյ է մեզ՝ թէ մեր ժամանակաւոր կենաց և թէ մեր հոգւոյ յաւիտենական փրկութեան համար. «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ». Մատթ. Զ, 33:

Հ. Քանի՞ տեսակ է աղօթքը:

Պ. Երկու. Հրապարակական և Առանձնական:

Հ. Ո՞րն է Հրապարակականն և ո՞րը Առանձնական:

Պ. Հրապարակականն է, որ շատ աղօթողաց հետ միասին տաճարի մէջ հրապարակաւ աղօթք ենք անում. «Ի տաճարի նորա ամենեքեան ասասցեն նմա զփառս». Սաղ. ԻԸ, 9: Իսկ Առանձնականն է, որ միայն առանձին ենք կատարում. «Մուտ 'ի սենեակ քո, և փակեա՛ զդրունս քո, և կաց յաղօթս առ Հայր քո 'ի ծածուկ». Մատթ. Զ, 6:

Հ. Հարկաւո՞ր են արդեօք երկու տեսակ աղօթքն ևս:

Պ. Այո. Հարկաւոր են որպէս Հրապարակականն. «Մըտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ 'ի յարկս նորա» Սաղ. ՂԹ, 4: Նոյնպէս և Առանձնականն. «Մուտ 'ի սենեակ քո, և փակեա՛ զդրունս քո, և կաց յաղօթս առ Հայր քո 'ի ծածուկ». Մատթ. Զ, 6:

Հ. Ո՞վ ուսոյց մեզ աղօթել, և ո՞րպէս:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ ասաց. «Երբ կայցէք յաղօթս, մի՛ լինիք շատախօսք իբրև զՀեթանոսսն. այլ ասացէք. «Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո». Մատթ. Զ, 7. 13:

Հ. Ի՞նչպէս կոչեցաւ այս աղօթքը:

Պ. Տէրունական աղօթք, պատճառ որ՝ ինքն Քրիստոս Տէրն մեր սովորեցրեց:

Հ. Այս աղօթքի մէջ քանի՞ խնդրուածք կան:

Պ. Եօթն:

Հ. Ո՞րն է առաջին խնդրուածքը:

Պ. «Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո»:

Հ. Այս ասելով՝ ի՞նչ ենք խնդրում Աստուծոյ:

Պ. Խնդրում ենք մեր երկնաւոր Հօրից, որ արժանացնի մեզ՝ սուրբ առնել, այսինքն փառաւորել նորա անունը, և որդիաբար ծառայել նորան:

Հ. Երկրորդ խնդրուածքը ո՞րն է:

Պ. «Եկեսցէ արքայութիւն քո»:

Հ. Այս ասելով ի՞նչ ենք խնդրում:

Պ. Խնդրում ենք Աստուծոյ, որ նա ինքն իւր շնորհօք թագաւորի մեր սրտի մէջ, որ մենք չծառայենք մեղքին և սատանայի:

Հ. Ո՞րն է երրորդ խնդրուածքը:

Պ. «Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի».

Հ. Սորանով ի՞նչ ենք խնդրում Աստուծոյ:

Պ. Խնդրում ենք որ մենք նորա կամքը կատարենք այս աշխարհումն այնպէս, որպէս երկնքումը կատարում են հրեշտակք:

Հ. Ո՞րն է չորրորդ խնդրուածքը:

Պ. «զՀաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»:

Հ. Սորանով ի՞նչ ենք խնդրում Աստուծոյ:

Պ. Խնդրում ենք, որ նա մեր օրական ապրուստը այսօր էլ տայ մեզ:

Հ. Հինգերորդ խնդրուածքը ո՞րն է:

Պ. «Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»:

Հ. Ի՞նչ ենք խնդրում սորանով:

Պ. Խնդրում ենք Աստուծոյ, որ ների մեզ մեր մեղ-

քերը, այնպէս որպէս մենք ներում ենք մեր դէմ մեղանչողաց:

Հ. Ո՞րն է վեցերորդ խնդրուածքը:

Պ. «Մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն»:

Հ. Ի՞նչ ենք խնդրում սորանով:

Պ. Սորանով խնդրում ենք Աստուծոյ, որ չդձի մեզ փորձութեան մէջ:

Հ. Եօթներորդ խնդրուածքը ո՞րն է:

Պ. «Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ»:

Հ. Այս ասելով ի՞նչ ենք խնդրում Աստուծոյ:

Պ. Խնդրում ենք որ ազատի մեզ ամենայն չար և մեղանչական գործքերից և սատանայի ձեռքից:

Սէր.

Հ. Ի՞նչ է Սէրն Աստուծոյ:

Պ. Աստուծոյ Սէրն է զգացումն կամ յօժարութիւն հոգւոյ (իղձ, փափագ, եռանդն), որով պատուում և փառաւորում ենք զԱստուած, ուրախանում ենք նորանով, և ցանկանում ենք կատարել նորա կամքը. «Սէրն Աստուծոյ սփռեալ է 'ի սիրտս մեր՝ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ որ տուաւ մեզ». Հռովմ. Ե, 5:

Հ. Ի՞նչէ պահանջում մեզանից Աստուծոյ սէրը:

Պ. Աստուծոյ սէրը պահանջում է մեզանից կատարել նորա օրէնքը և նորա հրամանները. «Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք». Յովհ. ԺԴ, 15: «Այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք». Ա, Յովհ. Ե, 3:

Հ. Ո՞րն է նորա օրէնքը, և ի՞նչ են հրամայում:

Պ. Աստուածաշունչ կանոնք են, որ հրամայում են չար գործքերից հեռանալ, և բարի գործել. «Դադարեցէք 'ի չարեաց ձերոց. ուսարուք զբարիս գործել». Եսայ. Ա, 16:

Հ. Աստուածային օրէնքները քանի՞ տեսակ են:

Պ. Երկու. Բնական և Յայտնեալ կամ Գրաւոր:

Հ. Ի՞նչ է բնական օրէնքը:

Պ. Բնական օրէնքը յԱստուծոյ տպաւորած մարդոյ հոգւոյ մէջ բնական ազդեցութիւն է, որ խղճմտանք է կոչւում, և ներսից իմաց է տալիս մարդոյ բարին և չարը. «Հեթանոսք որ զօրէնսն ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեն, նոքա որ զօրէնսն ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք, որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց». Հռոմ. Բ, 14:

Հ. Ո՞րն է Յայտնեալ կամ Գրաւորն, և քանի՞ է բաժանւում:

Պ. Յայտնեալ կամ Գրաւոր օրէնքներն են, որ Աստուած ինքն տուաւ գրով, և բաժանւում է երկու. Հին և Նոր:

Հ. Ո՞րն է Հին օրէնքը:

Պ. Հինն է այն օրէնքը, որ Աստուած Մովսէս մարգարէի ձեռքով տուաւ Իսրայելացւոց ազգին Սինայ լերան վերայ:

Հ. Հին օրէնքը քանի՞ տեսակ է բաժանւում:

Պ. Երեք. Արարողական, Դատաստանական և Բարոյական:

Հ. Ո՞րն է Արարողականը:

Պ. Արարողականն է այն օրէնքը որ գրած էր Աստուածպաշտութեան կարգք և արարողութիւնք կատարելու վերայ:

Հ. Ո՞րն է Դատաստանականն:

Պ. Դատաստանականն է այն օրէնքը որ դատաստան էին կարում ըստ իւրաքանչիւր յանցանաց, և պատիժ սահմանում:

Հ. Պէ՞տք է մեզ պահպանել հին օրէնքը թէ ոչ:

Պ. Ո՛չ. վասն զի դատաստանականք և արարողականք դադարեցան. «Այսուհետև ոչ էք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք». Հռոմ. Զ, 14: Իսկ բարոյականք կարևոր բացայայտութեամբ կրկին հաստատեցան Քրիստոսիւ. «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ». Մատթ. Ե, 17:

Հ. Ո՞յք են Բարոյական օրէնք:

Պ. Բարոյական օրէնքն են տասնաբանեայ պատգամքը:

Հ. Ի՞նչ է հրամայում Աստուած առաջին պատուիրանքով:

Պ. Հրամայում է որ ճանաչենք նորան, հաւատանք, 'ի բոլոր սրտէ սիրենք և ամենայն զօրութեամբ պաշտենք, ուստի պատուիրում է. Ա, «Ես եմ Տէր Աստուած քո. մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բայ յինէն»:

Հ. Ի՞նչ է պատուիրում Աստուած երկրորդ պատուիրանքով:

Պ. Հրամայում է որ կուռք չշինենք, ոչ երկնքի և ոչ երկրի արարածոց նման, և նոցա երկրպագութիւն չտանք: Կուռք նշանակում է քարից, փայտից, ոսկւոյ և այլնիւթոց շինած պատկեր, որոյ երկրպագութիւն են տալիս կռապաշտք. Բ, "Մի՛ արասցես դու քեզ զկուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս 'ի վեր և որ ինչ յերկիր 'ի խոնարհ":

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ Աստուած երրորդ պատուիրանքով:

Հ. Հրամայում է որ իւր անունը ունայն և սնոտի բանի վերայ չյիշենք, և սուտ չերդունք. Գ, "Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո 'ի վերայ սնոտեաց":

Հ. Ի՞նչ է պատուիրում Աստուած չորրորդ պատուիրանքով,

Պ. Պատուիրում է մեզ վեց օր մեր մարմնաւոր գործքը կատարել. իսկ եօթներորդ օրը իւրեան ընծայել, այսինքն աղօթքով և Աստուածպաշտութեամբ և բարեգործութեամբ պարապել. Դ, "Յիշեա սրբել զօր շաբաթուն՝ այսինքն զկիւրակէս":

Հ. Ի՞նչ ասել է շաբաթ և ո՞ր ազգի բառ է:

Պ. Շաբաթ ասել է հանգիստ, և Հրէից բառ է, որ Առաքեալք՝ 'ի պատիւ Քրիստոսի յարութեան՝ շաբաթ օրուայ սրբութիւնը՝ կիւրակէ օր փոխեցին: Կիւրակէ Յունարէն է, Հայերէն նշանակում է Տիրոջ օր կամ Աստուծոյ օր:

Հ. Ի՞նչ է հրամայում Աստուած հինգերորդ պատուիրանքով:

Պ. Հրամայում է պատուել մեր հօրը և մօրը, հնազանդ լինել նոցա. նմանապէս պատուել թագաւորը, բարերարները, ծերերը և մեծաւորները. Ե, "Պատուեա՛ զՀայրդ քո և զմայրդ քո, զի բարի լինիցի քեզ, և երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի":

Հ. Ի՞նչ է պատուիրում Աստուած վեցերորդ պատուիրանքով:

Պ. Պատուիրում է, որ մենք մեր կամքով, ոչ այլոց, և ոչ մեր մահուան պատճառ չլինենք, մինչև անգամ լեզուով ևս ոչ ոք չվիրաւորենք կամ չցաւեցնենք, Զ, "Մի սպանանե՛ր":

Հ. Ի՞նչ է հրամայում Աստուած եօթներորդ պատուիրանքով:

Պ. Հրամայում է ամէն չար և վատ գործքերից և ամէն անկարգ մարմնական ցանկութենէն հեռանալ և շնութիւն չանել. Է, "Մի՛ շնար":

Հ. Ի՞նչ է արգելում մեզ Աստուած ութերորդ պատուիրանքով:

Պ. Արգելում է այլոց ապրանքը ուժով կամ խորամանկութեամբ սեփհականել կամ խլել, Ը, "Մի՛ գողանար":

Հ. Իններորդ պատուիրանքով ի՞նչ է հրամայում Աստուած:

Պ. Հրամայում է սուտ չխօսիլ, և սուտ վկայութիւն չտալ և խաբեբայութիւն չանել. Թ, "Մի՛ սուտ վկայեր զընկերդ քումմէ":

Հ. Ի՞նչ է պատուիրում Աստուած տաններորդ պատուիրանքով:

Պ. Պատուիրում է մեր ընկերոջ ունեցած բաներին աչք չդնել և չցանկանալ, և ոչ մէկի համար չար բան չանցկացնել մեր մտքից, Ժ, "Մի՛ ցանկար տան ընկերի քո, և մի՛ ամենայնի որ ինչ նորա իցէ», Ել. Ի, 3—17: Բ, Օրին. Ե, 7, 21 *:

Հ. Ո՞րն է նոր Օրէնքը:

Պ. Նոր Օրէնքը Քրիստոսից աւանդած վարդապետութիւնքը և պատուիրանքներն են, որ աւետարանական քարոզութեամբ յայնեցաւ մեզ առաքելոց ձեռքով. "Ուրախ եմ 'ի չարչարանս իմ վասն ձեր, և

*) Այս տասնաբանեայ Պատգամքը բովանդակում է իւր մէջ երկու գլխաւոր պարտաւորութիւն, այս է Սէր առ Աստուած և Սէր առ ընկերն: Այս երկու պատուիրանքը որուած էին առաջ քան զտասնաբանեայ պատգամքը. «Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ և յամենայն մտաց քոց: Եւ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո». Օրին. Զ, 5: Ղևտ. ԺԹ, 18.

Այս երկու պատուիրանքը Բարոյական օրէնաց գլխաւոր հիմունքն են կազմում, ուստի փրկիչն մեր Յիսուս Քրիստոս անբաժան միացրուց միմեանց հետ, որովհետև մի և նոյն նպատակն ունին: Երբ Օրինականը հարցրուց Յիսուսին «Վարդապետ, ո՞ր պատուիրանն է մեծ յօրէնսն». Յիսուս պատասխան տուաւ. «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ և յամենայն մտաց քոց, այս է

ընում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի 'ի մարմնի իմում՝ վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի. որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայդ. Կողոս. Ա, 23:

Հ. Ի՞նչ է ուսուցանում մեզ նոր օրէնքը:

Պ. Նոր օրէնքը ուսուցանում է մեզ ապաշխարել մեղքերը, առանց որոյ չ'կայ մեղաւորաց փրկութիւն. Աստուծոյ օրէնքը պահել, արհամարհել աշխարհիս անցաւոր մեծութիւնը, սիրել ամենին սուրբ սրտիւ, մինչև անգամ և զթշնամիս և.ս. ներել միմեանց և ողորմել աղքատաց. հնազանդել տէրանց իբրև Աստուծոյ, փախչել կեղծաւորութենէ. ամենայն ժամ աղօթել և դիմել առ Աստուած ամէն նեղութեան

մեծ և առաջին պատուիրան. երկրորդ, նման նմին սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո, յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան»: Մատ. ԻԲ, 36—38.

Նոյնպէս և Պօղոս առաքեալը, Սէրն առ Աստուած և Սէր առ մարդն իւր քարոզութեան նպատակ դնելով, ասում է. «Զբոլոր պատուիրանին սէր է». Ա, Տիմ. Ա, 5: Լրումն օրինաց սէր է: Հռով. ԺԳ, 10:

Սէրն է խաղաղութեան ամենազլխաւոր կապը. «Ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կատարման». Կողոս. Գ, 14: Յիսուսի Քրիստոսի այս երկու խօսքը «Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան» պարզ բացայայտում է մեզ, որ այս երկու պատուիրանաց պահպանութեամբ լրումն կառնու բարոյական օրէնքը. Վասն զի ով որ զգացած և ոգևորուած է սիրով, նա պարտաւորած կլինի բոլորովին տեղեկանալ բովանդակ բարոյականութեանը, պատճառ որ, եթէ ունի սէր, նորա սիրտը արդէն լի է բարոյականու-

մէջ, և 'ի վեր քան զամենայն սիրել զԱստուած և վախենալ նորանից։

Հ. Ի՞նչ է Մեղքը։

Պ. Անհնազանդ լինել Աստուծոյ հրամանին, և կամ ծռելով կամքը ուղիղ կանոնից՝ ընդդէմ խղճմտանքի գործել. «Անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն». Հռովմ. Ե, 19։

Հ. Ի՞նչ առաջ եկաւ մեղքից։

Պ. Դատապարտութիւն և մահ. «'ի Միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, և 'ի մեղաց անտի մահ». Հռովմ. Ե, 12։

Հ. Քանի՞ տեսակ է մեղքը, և ի՞նչպէս են կոչւում։

նեամբ. վասն զի սիրելն զԱստուած աղբիւր է ամենայն առաքինութեան, և որ ինչ Դաւիթ մարգարէն ասաց երկիւղածայ վերայ, նոյնը կարելի է ասել և Աստուածասիրաց վերայ. «Զօրութիւն է ծեր երկիւղածաց իւրոց և զկատակարանս իւր ուսուցանէ նոցա» Սաղ. ԻԴ, 14։

Այս երկու օրինաց մէջ պարունակւում են նաև պարտաւորութիւնքը առ մեր անձն, թէպէտ այս պարտուց վերայ յայտնի խօսուած չէ։ Որովհետև սիրելով զԱստուած յամենայն անձնէ պարտաւորւում ենք չցանկալ աշխարհի ունայնութեան և վայելչութեան, պարտաւորւում ենք չընծայել մեր սիրտը մնոտեայ, պարտաւորւում ենք չորոնել նոցա մէջ երջանկութիւն և չյուսալ կատարեալ միխիթարութեան, այլ պատրաստ լինել ամենայն ինչ զոհել իսէր Աստուծոյ և համբերութեամբ տանել ամենայն նեղութեանց և զրկանաց։

Յիսուս Քրիստոս պատուիրելով մեզ սիրել զԱստուած յամենայն սրտէ և զընկերն յամենայն անձնէ, արգելում է մեզ

Պ. Երկու. Սկզբնական և Ներգործական։

Հ. Ո՞րն է Սկզբնականը և ո՞րը Ներգործական։

Պ. Սկզբնական կոչւում է Ադամայ մեղքը. իսկ ներգործականն է որ մենք մեր կամքով ենք մեղք գործում։

Հ. Ներգործական մեղքը քանի՞ տեսակ է։

Պ. Երկու. Թեթև և մահուչափ։

Հ. Ո՞յք են թեթև մեղքերը։

Պ. Այն մեղքերը, որ անդիտութեամբ, տկարութեամբ և ակամայ է գործում մարդ. «Զառայ որ ոչ գիտիցէ զկամս տեառն իւրոյ, և արժանի զանի ինչ գործիցէ, արբցէ զան սակաւ», Ղուկ. ԺԲ, 48։

Հ. Մահուչափ մեղքերը որո՞նք են։

Պ. Մահուչափ կոչւում են այն մեղքերը, որ մահաց-

բաժանել մեր սիրտը յԱստուծոյ և նուիրել այնպիսի առարկայից, որ հակառակ են Աստուծոյ։ Մենք կարող ենք ամեն բան սիրել Աստուծով, Աստուծոյ մէջ և Աստուծոյ համար։ Այս պատճառաւ է, որ ասում է Յովհաննէս առաքեալը. «Մի՛ սիրէք զաշխարհ և մի՛ որ ինչ յաշխարհի է». Ա. Յովհ. Բ. 13։

Յիսուս պատուիրում է սիրել զընկերն, ոչ թէ Աստուծոյ պէս, այլ մեր անձին պէս։ Պատուիրում է սիրել մեր սիրոյն արժանի եղած արարածքը ծայրագոյն էակի ամենամեծ սիրոյն համար։ Յիսուս ուսուցանում է մեզ չորոնել որ և իցէ արարածոյ մէջ հանգստութիւն և երջանկութիւն, պատճառ որ, միմիայն Աստուծոյ մէջ կգտնւի հանգստութիւն, երջանկութիւն, մխիթարութիւն և խաղաղութիւն։ Յիսուս ուսուցանում է մեզ սիրել մեր ընկերը, աշխատելով նորա երջանկութեան համար, այնպէս ինչպէս որ աշխատում ենք մեր անձին երջանկութեան համար։

Կ. Ո. Պ.

նում են մարդոյ հոգին, յաւիտենական պատժի տակ են դնում, և զրկում են երանական կեանքից. «Մեղքն ձեր որոշեն 'ի մէջ ձեր և 'ի մեջ Աստուծոյ». Եսայ. ԾԹ, 2:

Հ. Քանի՞ են մահուչափ մեղքերը:

Պ. Եօթը. Հպարտութիւն, Նախանձ, Բարկութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն, և Բղջախոհութիւն:

Հ. Ի՞նչ է Հպարտութիւնը:

Պ. Հպարտութիւնը այնպիսի կիրք է, որ մարդ ինքն իրան ամենից բարձր և գերազանց է համարում, արհամարհելով իւր ընկերը՝ Աստուծոյ տուած բարութիւնքը իւրեանից է կարծում:

Հ. Ո՞րն է Հպարտութեան դեղը:

Պ. Խոնարհութիւնը, որ մարդ դնում է իւր մտքումը թէ ինքն ոչինչ է, և թէ ինչ լաւութիւն որ ունի Աստուծոյ է ամենը:

Հ. Ի՞նչ է Նախանձը:

Պ. Նախանձը վատ կիրք է, երբ այլոց լաւութեան վերայ տխրում է մարդ և ցաւում է, և ձախորդութեան վերայ ուրախանում է:

Հ. Ի՞նչ է Նախանձու դեղը:

Պ. Ընկերասիրութիւնը, որ այլոց ձախորդութիւնը և թէ յաջողութիւնը այնպէս է համարում՝ ինչպէս իւրեանը, և միշտ ընկերոջ վերայ լաւ է խօսում. և ոչ ինչ լաւութիւն չէ խնայում:

Հ. Ի՞նչ է Բարկութիւնը:

Պ. Բարկութիւնը սրտի անկարգ շարժմունքն է, երբ մարդ ումից և ինչ կրած նեղութեանը չէ դիմանում, և չէ կարողանում համբերել, կատաղում է և մարդկութեան կարգից դուրս է գալիս:

Հ. Բարկութեան դեղը ո՞րն է:

Պ. Երկայնմտութեամբ համբերել. և տանել այն ամէն նեղութեանց և պակասութեանց, որն որ կրում է ուրիշներից:

Հ. Ծուլութիւնն ի՞նչ է:

Պ. Այնպիսի ախտ է, որ մարդ իւր հանգստութիւնը ամէն բանից աւելի մեծ է համարում, և ամենևին հոգս չէ անում իւր պարտաւորութիւնքը կատարել:

Հ. Ծուլութեան դեղը ի՞նչ է:

Պ. Արիութիւնը, որ ամէն ժամանակ մարդ աշխատում է իւր պարտաւորութիւնքը կատարել, պատրաստ է միշտ և զգուշանում է ամէն վտանգներից:

Հ. Ագահութիւնն ի՞նչ է:

Պ. Որ և ինչ կերպով՝ թէ արդար և թէ անիրաւը չմտածելով՝ խելքն ու միտքը փող հաւաքելումը դնել, աշխատածը պինդ պահել, և ոչ ոքին օգուտ չբերել. կամ անկարգ ախորժակ և ցանկութիւն ժամանակաւոր հարստութեանը:

Հ. Ագահութեան դեղը ի՞նչ է:

Պ. Ողորմածութիւնը, որ մարդ իւր արդար վաստակից աղքատաց ողորմութիւն է տալիս, և կարօտեալց օգնում է:

Հ. Ի՞նչ է Որկրամոլութիւնը։

Պ. Որկրամոլութիւնն է որովայնին (փորին) դերի դառնալ, որովայնին ծառայել, չափից աւելի ուտել խմել։

Հ. Որկրամոլութեան դեղը ի՞նչ է։

Պ. Ժուժկալութիւնը (չափաւորութիւն), որ մարդ զսպում է և պահում է իւրեան չափաւանց և կարգից դուրս հեշտալի և ախորժելի բաներից։

Հ. Ի՞նչ է Բղջախոհութիւնը։

Պ. Բղջախոհութիւնը այնպիսի ախտ է, որ մարդ սաստիկ հետևում է ցանկութեանը, և կամ չէ զսպում իւր ցանկութեան կիրքը։

Հ. Բղջախոհութեան դեղը ո՞րն է։

Պ. Ողջախոհութիւնը, որ մաքուր է պահում իւրեան, դարշելի մտածմունք չէ անում, ցանկութիւն շարժող պատճառներից հեռու է պահում։

«Որ ոք գիտիցէ զբարին, և ոչ առնիցէ, մեղք են նմա». Յակ. Դ, 17։

ՀԱՅՈՑ ՐՈՒԻՍԱՓԹ. ԸՆԿ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԻՄՆ. 1894 ՆՈՐՈՐՏ. 1909 Տեփ.
Основ. Нов. пер.
БИБЛІОТЕКА
ZUUA-ԳՐԱԴԱՐԱՆ
8 Іюня 1898

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
3 —	8.	Հ,	Հ, 7.
4 —	12.	78	77.
4 —	27.	սչ	ոչ
5 —	14.	ոնմաք,	ոմանք,
7 —	11.	տռաքելոյ	առաքելոյ,
8 —	19.	Ը, 10	ԻԳ, 8.
9 —	8.	Թես,	Ա, Թես,
9 —	7.	ուսայք	ուսայք.
13 —	18.	ԺԸ,	ԺԷ,
15 —	20.	ամենակատար	ամենակարող,
18 —	18.	ԺԸ,	ՃԺԸ,
25 —	2.	Դ,	Գ,
28 —	9.	Գ,	Դ,
30 —	2.	Ղուկ,	Մատթ.
30 —	9.	Յովհ,	Ա, Յովհ,
31 —	21.	Ժ,	ԺԲ,
33 —	5.	կոչեցաւ	կոչեցաւ.
36 —	26.	խորհուդ	խորհուրդ,
44 —	14.	4,	41,
58 —	10.	Հ,	Պ,
62 —	1.	ղԱաուած	ղԱստուած,
66 —	19.	նսա	նմա,

35

3370

15թ



3461